



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Ժողովրդի կամքին այլընտրանք չկա

Այն ժամանակակից, որ հիմնադրվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, մինչ օրս միջազգայնորեն անկախ ճանաչված երկրների թիվը գրեթե քառապատկվել է: Հիմնադրման տարիներին ՄԱԿ-ին անդամակցում էին 51, այժմ՝ 193 երկրներ: Դա իրականացվել է 70 տարիների ընթացքում: 70 տարին պատմության ակնթարթային պահ է, սակայն անկախության ձեռքբերումը այս 142 երկրներից յուրաքանչյուրի համար՝ մի ամբողջ պատմություն:

Անցյալ դարի 60-ականներ, 90-ականներ եւ այժմ. կարծես թե անկախության ձգտումը ամեն 30 տարին մեկ թեժացման միտում է ունենում: Դեռ անցյալ դարի 60-ականներին, երբ երկու գերտերությունների միջեւ սառը պատերազմն էր ձեւավորվում, հիմնականում խորհրդային բլոկը աշխարհի զանազան կետերում նեցուկ էր կանգնում ազգային ազատագրական պայքարներին: 90-ականներին խորհրդային Միության փլուզումը նոր թափ հաղորդեց անկախ երկրների ձեւավորմանը: Իսկ այժմ Եվրոպական մետրոպոլիայի ստեղծումն ու նրան հակազդելու լծակների օգտագործումը, ինչպես նաեւ Մերձավոր Արեւելքում արաբական գարունից սկսած՝ պետությունների վերախմաստավորումը պատճառ են դարձել ազգերի ինքնորոշման նոր թափի առաջացման:

Ազգային ազատագրական պայքար, անկախության հանրաքվե, ինքնորոշման իրավունքի իրացում. ինչ անուն էլ կրի, դրա վերջնական արդյունքը մնում է նույնը՝ ինքնիշխան պետության ձեւավորում: Սա է ներկայումս գոյություն ունեցող պետությունների կազմավորման երեք քառորդի ուղին: Դեռ ավելին՝ քաղաքական միտումները հուշում են, որ դեռեւս Նույն ընթացակարգով Հարունակներն են ձեւավորվել նորանկախ պետությունները եւս:

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ըստ Եռության հավաստության մեջ է երկրների տարածքային ամբողջականությունն են: Ինքնան էլ ցանկանանք միջազգային իրավական մեկնաբանություններով մեղմել այդ հակասությունը, մեկ է, պատմությունը փաստում է՝ տարածքային ամբողջականության սկզբունքը տեղի է տալիս:

Ինքնորոշված երկրները այլոց կողմից ճանաչվածություն ձեռք բերելու եւ միջազգային հանրությանը մաս կազմելու ճանապարհին բախվում են տարածքային ամբողջականության խախտման փաստարկին: Այստեղ պետք է ի մտի ունենալ, որ ինքնորոշումը իրավունք է, որի սկզբնաղբյուրը ժողովուրդն է: Ժողովուրդն է, որ կամքը դրսեւորում է անկախ պետություն ունենալու համար: Իսկ դրան հետեւող ճանաչվածության հանգամանքը ըստ Եռության պայմանավորվածություն է պետությունների միջեւ: Պայմանավորվածություն, որը չի կարող գերակա լինել ժողովրդի կամքից:

Ժողովուրդների կամքը իրականություն է դառնում վաղ թե ուշ, իսկ պետությունների միջեւ պայմանավորվածությունները փոխարինվում են այլ պայմանավորվածություններով:



Արցախի Հանրապետության զարգացումն ու զորացումը գերխնդիր է, ինչից կախված է համայն հայության ապագան

Նախագահ Բակո Սահակյանը հոկտեմբերի 16-ին ընդլայնված խորհրդակցություն է հրավիրել՝ նվիրված Արցախի Հանրապետության Նախագահի 2017-2020 թվականների ծրագրի հիմնական դրույթներին:

Երկրի ղեկավարն անդրադարձել է պետականաշինության, քանակաշինության, անվտանգության եւ հասարակական կարգի պահպանման, արտաքին քաղաքականության, տնտեսության, սոցիալական, մշակույթի, սպորտի, առողջապահության, ժողովրդագրության, զբոսաշրջության եւ այլ ոլորտներում մոտակա երեք տարիների ընթացքում իրականացվելիք աշխատանքներին ու ծրագրերին:

Նախագահն ընդգծել է, որ ծրագրային դրույթներն արդյունավետորեն կյանքի կոչելու համար անհրաժեշտ է իշխանության բոլոր թերթերն ու կառույցները, պետության ու հասարակական հատվածի համատեղ, կազմակերպված ու համակարգված աշխատանք, որը պահանջում է պարտականությունների կատարման հանդեպ պատասխանատվության բարձր աստիճան:

Անդրադառնալով Արցախյան հակամարտության կարգավորման եւ ԱՀ արտաքին քաղաքականության խնդիրներին՝ Նախագահ Բակո Սահակյանը նշել է. «Ուզում մեկ անգամ ես չեմ տես, որ անկախությունն ու անվտանգությունը մեզ համար անձեռնմխելի արժեքներ են եւ հանդիսանում են Արցախի Հանրապետության պետականաշինության հիմնարար սկզբունքները: Ազատ, անկախ եւ հզոր, իր անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու ունակ, Արցախի Հանրապետության հետագա զարգացումն ու զորացումը գերխնդիր է, ինչից, առանց չափազանցության, կախված է նաեւ համայն հայության ապագան»:

Նախագահ Սահակյանը շեշտել է, որ պաշտոնական Ստեփանակերտը հավատարմիք է հակամարտության խաղաղ կարգավորմանը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, կարելի է ընդհատել ընթացքը, կարելի է խորացնել իրարմե ձեռագրի վերականգնման անհրաժեշտությունը: «Արցախի ճակատագիրը չի կարող որոշվել առանց նրա անմիջական մասնակցության քանակաշին գործընթացի քննարկումների: Եվ այստեղ Մայր Հայաստանի փոփոխությունները են:

տանի հետ մեկտեղ մենք շարունակելու ենք համապատասխան քայլեր ձեռնարկել»:

«Անհրաժեշտ կլինի նոր որակ հաղորդել մեր հանրապետության ճանաչման, արտաքին աշխարհին ճանաչելի դառնալու, ինչպես նաեւ տարբեր երկրների ու նրանց տուրքերի տեղի հետ համագործակցության հաստատման ու խորացման գործընթացներին: Այստեղ ամենավերջին զարգացումներից է Արցախի Հանրապետության անկախության փաստացի ճանաչումը ԱՄՆ Միչիգան նահանգի կողմից, ինչը համարում ենք կարեւոր ձեռքբերում:

Մեզ ի սկզբանե հաջողվել է արտաքին քաղաքականությունը կառուցել հավասարակշռվածության եւ բազմաուղղվածության սկզբունքներին համապատասխան, եւ ապագայում ես որակե անկախորեն ուղենշ կհանդիսանան մեր երկրի համար: Այս համատեքստում կշարունակենք բարդացնել հարաբերությունները պահպանել Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ տարածաշրջանային պետությունների հետ»,- ծրագրային ելույթում նշել է Բակո Սահակյանը:

Ստեղծագործական աշխատանքների մրցույթ՝ նվիրված Արմեն Ավագյանի ծննդյան 50-ամյակին

Սիդնիի՝ հայրենակիցներ, Տեղեկացնում ենք, որ ՀՀԿ Արցախի երիտասարդական Միությունը սույն թվականի հոկտեմբերի 7-25-ը Մարտունու շրջանի համայնքների դպրոցների ավագ դասարանների աշակերտների համար հայտարարում է «Բարեւ հրամանատար»,- «Անմահության ճամփորդ» խորագրերով ստեղծագործական աշխատանքների մրցույթ՝ նվիրված Արցախյան պատերազմի առաջամարտի, Աշան գյուղի ինքնապաշտպանական ջոկատի՝ հրամանատար, ՀՀԿ գաղափարակիր Արմեն Ավագյանի ծննդյան


50-ամյակին: Ստեղծագործական աշխատանքի տեսքերը պետք է լինի տպագիր՝ 500 բառից ոչ ավել: Աշխատանքի հետ պարտադիր է նշել նաեւ աշխատանքի հեղինակի անուն-ազգանունը, հասցեն եւ հեռախոսահամարը: Մրցանակային 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրած ստեղծագործական աշխատանքներն արժանանալու են դրամական պարգևների եւ պատվոգրերի: Պարգևատրման օրվա մասին կհայտնենք լրացուցիչ:

Աշխատանքներն անհրաժեշտ է մինչ-



չեւ հոկտեմբերի 25-ը ուղարկել hydaem.mrcsyrt.2017@gmail.com էլեկտրոնային հասցեին կամ ներկայացնել ՀՀԿ Ստեփանակերտի գրասենյակ (ք. Ստեփանակերտ, Կոնյանցյանի 17): Լրացուցիչ հարցերի դեպքում զանգահարել 097 36 03 10 կամ 047 94 38 43 հեռախոսահամարներով:

Ժնեւում կայացել է Սարգսյան-Ալիև հանդիպումը



Հոկտեմբերի 16-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նախաձեռնությամբ Ժնեւում կայացել են Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների բանակցությունները:

Հանդիպման վերաբերյալ Արցախի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը տարածել է մեկնաբանություն, որտեղ մասնավորապես ասվում է. «Կարծում ենք՝ ադրբեջանա-դարաբադյան հակամարտության կարգավորման գործընթացում իրական առաջընթաց ձեռք-

բերելու ճանապարհին եւս մեկ քայլ պետք է դառնա լիարժեք ձեռնարկով բանակցությունների վերականգնումը՝ դառնալով փուլերին Արցախի Հանրապետության անմիջական մասնակցությամբ»:

Հանդիպումը տեղի է ունեցել երկու երկրների արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոլոզովի (Ռուսաստան), Էնդրյու Շեֆերի (ՄԱՆ), Ստեֆան Կիսկոսկի (Ֆրանսիա) ու ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Մնջեղ Կասպրջյանի մասնակցությամբ:

Հանդիպումից հետո կայացել է նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիևի առանձնագրույցը:

Քննարկվել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի առաջընթացն հնարավորությունները: Բանակցությունների արդյունքում նախագահները համաձայնել են միջոցներ ձեռնարկել բանակցային գործընթացի ակտիվացնելու եւ հավելյալ քայլեր կատարելու չփման գծում (արվածությունը նվազեցնելու նպատակով):

Համանախագահները գոհունակություն են հայտնել երկու ընդմիջումից հետո կայացած ուղղակի բանակցությունների առթիվ: Նրանք ընդգծել են, որ պատրաստակամ են կողմնորդի հետ շարունակել միջնորդական աշխատանքը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ բանակցային

կարգավորման ուղղությամբ:

Ժնեւում Ընդգրաքային Համադաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 16-ին հանդիպում է ունեցել նաեւ շվեյցարիա համայնքի ներկայացուցիչների հետ: Հանրապետության նախագահը հանդիպման ժամանակ իր ներածական խոսքում նաեւ ներկայացրել է Ադրբեջանի նախագահի հետ բանակցությունների արդյունքները:

«Մի քանի րոպե առաջ Ադրբեջանի նախագահի հետ հանդիպումն ավարտվեց, որնեւ կոնկրետ պայմանավորվածություն, այսպես ասած, չուներ խոսքի լուծման տարբերակների մասին: Բայց պայմանավորվել ենք, որպեսզի միջոցներ ձեռնարկենք լարվածությունն էլ ավելի թուլացնելու, որպեսզի առաջնագծում չունենանք զոհեր: Պետք է ասենք՝ եւ Ադրբեջանի նախագահը, եւ՝ ես դրանում խորապես շահագրգռված եմ: Տա Մատվաժ, որ միշտ այդպես կրծած: Նա էլ շատ լավ է հասկանում խնդրի բարդությունը, քանակաաբար, ես էլ, բայց խնդրի այնպիսին է, որ հեշտ լուծում երբեք չի լինելու: Մակայն մի հարցում էլ ուզում եմ, որ բոլորը վստահ լինեն՝ մեզ համար չկա լուծում, որը կարող է ինչ-որ կերպ խաթարել Ղարաբաղի անվտանգությունը: Մեզ համար միակ լուծումն այն է, որ Ղարաբաղը լինի Ադրբեջանից դուրս»,- ասել է հանրապետության նախագահը:

«Ապառաժ»

Արցախի եւ Հայաստանի ՀՀԴ խմբակցությունները հանդիպել են

Հոկտեմբերի 17-ին Երեւանում տեղի է ունեցել Արցախի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովների ՀՀԴ խմբակցությունների հանդիպումը: Նման հանդիպումները կայանում են ամսվա ընթացքում երկու անգամ:

Արցախի դաշնակցական պատգամավորները ՀՀԴ Հայաստանի ՊԿ-ում հանդիպեցին ՀՀ ՀՀԴ խմբակցության պատգամավորներին եւ դաշնակցական նախարարներին հետ:

Արցախի ՀՀԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը, Yerkir.am-ի հետ խոսելով հանդիպման թեմաների մասին, տեղեկացրեց, որ այս անգամ քննարկման առարկան լինելու են մի քանի օրենսդրական նախաձեռնություններ:

«Տեղեկատվական փոխանցումներից բացի, մենք կունենանք որոշ օրենքների շուրջ քննարկումներ, հատկապես՝ այն օրենքների, որոնք ՀՀ-ում վերջերս են ընդունվել»,- ասաց Դ.Իշխանյանը:

Իշխանյանի խոսքով՝ իրենք շրջելու են նաեւ Հայաստանի խոշորագույն համայնքներում: «Նախատեսում ենք Հայաստանի տարբեր խոշորագույն համայնքներ այցելել՝ ուղղակի-

որեն ծանոթանալու եւ մեզ համար լուսաբանելու այն իրական ջայլերը, այն դրական տեղաշարժերը, ինչու չէ՝ նաեւ այն բացերը, որոնցից մենք կարող ենք օգտագործել, իսկ առավելություններից օգտվել նաեւ Արցախում»,- ասաց նա:

ՀՀ ԱԺ ՀՀԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանն էլ մեզ հետ զրույցում նշեց՝ Ղաշնակցությունը որտեղ էլ լինի, նույն նպատակները պետք է հետապնդի եւ նույն ռազմավարությամբ հանդես գա, ուստի նման հանդիպումներն անհրաժեշտ են:

«Անհրաժեշտություն միշտ առաջանում է, որպեսզի մենք մեր կատարած եւ ակնկալվող ջայլերի հետ կապված նախնական քննարկումներ կատարենք, որպես իրար հետ համաձայնեցնել, որ ընդհանուր ռազմավարությունը պահպանենք: Սա է ընդհանուր նպատակը, բայց կոնկրետ հարցեր են առաջանում՝ կապված տվյալ պահին քննարկվող օրենքների, նախաձեռնությունների մասով, որոնք մենք իրականացնում ենք»,- ասաց նա:

Ռուստամյանին ընդգծեց, որ Հայաստան-Արցախ տանդեմը պետք է գնալով ավելի ու ավելի ամրապնդվի: «Հայտնի է անվտանգության հարցերի հետ կապված մեր տեսակետը:



Մենք մեկ միասնական համակարգի մեջ ենք, եւ սա պետք է ոչ թե միայն խոսք լինի, այլ պետք է միս ու արյուն ստանա»,- ասաց նա ապա հավելեց. «Մենք չենք կարող շրջապահել բանակաշինության, սահմանային իրավիճակների հետ կապված հարցերը, մեր անելիքները»:

Yerkir.am

Արցախի համար ամենակարեւորը խաղաղությունն է



Ֆրանսիայի Ազգային ժողովի հայազգի պատգամավոր Դանիել Ղազարյանը պատասխանում է «Իրանի Ղազարյան» թերթի հարցերին: «ԻՆՉ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՄ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՎԱՆ, ԵՎ ՀԱՅԱՎԱՆ ՊԱՏԱՎՈՐՈՒՄ»:

Տիկին Ղազարյան, կմարմանե՞ք, թե ինչով էր պայմանավորված այս անգամ Ձեր այցը Հայաստան:

– Այնպիսի շարք եմ եկել Երեւան եւ Երեկ էլ ՀՀ քաղաքացի դարձա: Այնպես որ, իմ այցը մասնավոր ընկույթ ունի՝ քաղաքացիություն ձեռք բերելու համար: Սակայն մասնավոր դարձավ գործնական այց, եւ մեզ պատվով էր, որ ինձ ընդունեցին ՀՀ Ազգային ժողովում:

Ֆեուաբերդի է՝ ինչի՞ շուրջ է ձևավորվել քննարկումը հայաստանյան գործընկերների հետ:

– Ֆրանսիայում կայացավ ավելի շատ մասնավոր շրջանակներում, բայց, իհարկե, քննարկվեցին շատ տարբեր թեմաներ, որոնք վերաբերում են Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ կապերին, դրա ամրապնդմանը: Իհարկե, մեկուկուսակ կապերը Ֆրանսիայի եւ Հայաստանի միջեւ միշտ առկա են եղել, ինչի համար ինքս անձնակազմ շատ ուրախ եմ: Ի դեպ, 2018 թվականի աշնանն այստեղ՝ Երեւանում, կայանալու է Ֆրանսիոֆոնիայի գագաթնաժողովը: Այնտեղ, եւ Ֆրանսիայի խորհրդարանում ծագումով երեք հայ պատգամավոր կ'ա՛ն, Գրիմ Կասբարյանը եւ Շալա Մարիոլյանը: Մենք իրուկն ամսին ենք ընտրվել՝ որպես խորհրդարանական, եւ մաս ենք կազմում

Ֆրանսիայի Հանրապետության նախագահի «Առաջ հանրապետություն» կուսակցության: Ուստի, ՀՀ քաղաքացիություն ստանալով՝ երեկվանից սկսած ինձ համարում եմ՝ Ֆրանսիական, եւ հայկական պատգամավոր, որը Ֆրանսիայում ներկայացնում է նաեւ Հայաստանը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆԴՈՒՐԻՎ ԸՆՏՐՈՒՄԻՑ ՊԱՏԱՎՈՐՈՒՄ:

Իսկ ինչո՞ւ որոշեցիք մտնել քաղաքականություն:

– Իմ քաղաքական ներգրավվածությունը, կարելի է ասել, եղավ նախագահ Մակրոնի խնդրից, որովհետեւ ինձ մտա այդպես էլ ծրագրավորված չէր իմ կյանքի ընթացքում քաղաքականությամբ զբաղվել: Բայց մեր նախագահը տվեց այդ հնարավորություններն այն մարդկանց, ովքեր քաղաքացիական հասարակություն են ներկայացնում, ինչպիսին ես եմ, որպեսզի սկսեն զբաղվել քաղաքականությամբ ու աշխատեն ի նպաստ Ֆրանսիայի: Սա մի գործառնություն է, որը 52 տարեկանում ինձնից մեծ պարտավորություններ է նկատող, բայց ես կարողացա հաղթահարել եւ ընտրվել:

Անդրադառնալ նաեւ Ֆրանսիայում հայ համայնքի խնդիրներին...

– Հայկական համայնքը շատ ուժեղ կառուցվածք ունի եւ շատ լավ վիճակում է գտնվում: Հայկական թերթ ունենք, դպրոց ունենք, եկեղեցիներ ունենք: Ուզում եմ անալոգիան նշել, որ Ֆրանսիայում 2013 թվականին «Հայկական հիշողության» կենտրոն է բացվել, որի նախագահն եմ եղել: Այն շատ կարելի է մեզ համար, մանավանդ՝ նոր սերունդների համար: Այդ կենտրոնում շատ աշխատանքներ ենք իրականացնում, եւ մեր նպատակն է լինել բաց ոչ միայն դեպի հայեր, դեպի հայկական համայնքը, այլեւ շատ տարբեր աշխատանքներ կատարել՝ դպրոցականների, համալսարանականների ներկայացնելով հայկական ինքնությունը եւ, իհարկե, պատմությունը: Այնպես որ, Ֆրանսիայում հայկական հա-

մայնքը դիմադրի կերպով զարգանում է, հատկապես այնպիսի մեծ քաղաքներում, ինչպիսին են Լիոնը, Մարսելը եւ Փարիզը:

ՆԱԽԱԳԱՅԻ ԵՎ ՄԱԿՐՈՆԻՑԻՆԻՑ ՀԱՏ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱՎԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՐԵԸ:

Ինչպե՞ս կզնախտեք հայ-ֆրանսիական հարաբերությունները թե՛ միջխորհրդարանական մակարդակում, թե՛ քաղաքական:

– Մեր նախորդ նախագահի՝ Ֆրանսուա Օլանդի օրոք գոյություն ուներ հայ-ֆրանսիական միջխորհրդարանական բարելավման խումբ, որը բավականին ակտիվ էր խորհրդարանում: Այդ խմբում ներառված էր մոտավորապես 60 պատգամավոր տարբեր խմբակցություններից եւ կուսակցություններից: Բայց, քանի որ ընտրություններից հետո Ֆրանսիայում բարդոլջվին վերափոխվեց եւ ձեւափոխվեց քաղաքական կարգը, հիմա շատ խորհրդարանականներ այլեւս իրենց տեղերը չեն զբաղեցնում Ազգային ժողովում: Այժմ խնդիր է առաջացել ձեւավորել նոր բարեկամական խումբ, որի նախագահ վերջերս ընտրվել է Ֆրանսիայում հայազգի պատգամավոր Շալա Մարիոլյանը: Մեր առաջիկա աշխատանքը պետք է լինի այն, որ վերականգնենք, վերստեղծենք ու ձեւավորենք այդ բարեկամական խումբը, որը կնկողնի էլ ավելի շատ ներկայացուցիչներ: Այդ խմբի հետ կապված գրանցումները ընդամենը մի քանի շաբաթ առաջ են սկսվել, եւ այս ժամանակի ընթացքում, հուսով եմ, որ այն կամբողջացի:

Մոտախաղաղ հայ-ֆրանսիական հարաբերություններում ի՞նչ ուղղությամբ եք տեսնում հնարավոր զարգացում:

– Հայաստանում եւ Ֆրանսիայի միջեւ մշակութային կապերը միշտ էլ գոյություն են ունեցել եւ շատ ուժեղ են եղել, բայց մեր նպատակն է մշակութայինից գալ զարգացնել հայ-ֆրանսիական տնտեսական կապերը: Մակրոն Հայաստանի Հանրապետությունը շատ երիտասարդ է, ընդամենը 26 տարեկան, բայց ամեն անգամ, երբ այցելում եմ Երեւան, տես-

նում եմ այդ փոփոխությունները, առաջընթացը, եւ հուսով եմ, որ հնարավոր կլինի էլ ավելի ուժեղացնել տնտեսական կապերը: Զե՛ր՝ որ Հայաստանը կարիք ունի տնտեսական զարգացման, ինչը թույլ կտա հայ երիտասարդներին մնալ իրենց երկրում: Գիտեմ, որ սա նաեւ ՀՀ նախագահ պարոն Սերժ Սարգսյանի մտահոգություններից մեկն է, որպեսզի տնտեսական զարգացումը նպաստի նրան, որ հայ երիտասարդները կարողանան իրենց տեղը գտնել հայրենիքում:

ՄԱՏ ԿԱՐԱՅՈՒՄ ԼՂ ՀԱՅԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՇՈՒՐ ԿՑՈՒՄ:

Ֆրանսիայի խորհրդարանի ազգությամբ հայ երեք պատգամավորների օրակարգում հայ-ֆրանսիական հարաբերությունների հետ կապված ի՞նչ օրակարգային հարցեր կան, որոնք կփորձեք բարձրացնել խորհրդարանում:

– Ինչպես նշեցի, գլխավորը լինելու է ավելի զարգացնել գոյություն ունեցող մշակութային, տնտեսական, քաղաքական կապերը մեր երկու երկրների միջեւ: Ինչպես նաեւ կա մի հարց, որն ինձ համար անձնապես շատ կարեւոր է՝ Արցախի հարցը: Ինչպես գիտեմ, Ֆրանսիան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներից մեկն է՝ Միացյալ Նահանգների եւ Ռուսաստանի հետ միասին: Եվ կարծում եմ՝ մտա ապագայում ԼՂ հակամարտության լուծումը կգտնվի, որը տեղի է ունենում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ: Մենք Ֆրանսիայում շատ ուշադիր հետեւեցինք այն բախումներին, որոնք տեղի ունեցան անցյալ տարի ապրիլյան պատերազմի ժամանակ: Եվ պետք է ասենք, որ Արցախի համար ամենակարեւորը խաղաղությունն է, ուստի՝ հուսանք, որ Ֆրանսիայի նախագահ Մակրոնը, ինչպես Նախորդ նախագահը, իր ջանքերը կշարունակի խնդրի խաղաղ կարգավորման համար:

ՀԱՆՏԱ ՍԱՐԿՅԱՆ
iravunk.am

Ավգյան ախոռների մաքրման հերթական մեկնարկ Եվրոպայում



Ու՛մ չէ հայտնի, որ աղբազերծման այդ գործընթացն առաջին անգամ մեկնարկել է հիմնվորող Ֆելպայում՝ Ավգիաս արքայի բարձրիորդի մատակած աղբակուտակ փախուձնում: Կնդիրը, ինչպես գիտեք, այն ժամանակ լուծվել է հունական դիցարանի հերոս Զերկուլեսի ջանքերով, ով մեկ օրում մաքրել է դրանք՝ այնտեղ ուղղելով Ալկեոս - Դիոսոս գետերի ջրերը:

Եվ ահա մաքրագտման այդ գործողությունը հազարամյակներ անց, հերթական անգամ իրականացվեց բառացիորեն վերջերս, միջազգային երկու կառույցում համաժամանակ՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության ու մշակույթի կազմակերպությունում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ում և Ես հորդորդարանական վեհաժողովում: Ընդ որում, զարմանալի զուգահեռություններ, ինչպես իհի աշխարհի հսկա Զերկուլեսին վերագրվող այդ առասպելի ժամանակ էր՝ դարձյալ մեկ օրում: Ուշագրավ է նաեւ, որ եթե անհիշելի այն ժամանակներում խոսքը վերաբերում էր ընդամենն արքայական երամակի արտեղանքի հեռացմանը, ապա այս անգամ խնդիրն առավել ընդհանրական է, կարելի է ասել՝ համաշխարհային նշանակության. այն է՝ արդեքեանական «խավիրային քաղաքակրթության» կամ վերջին շրջանում միջազգայնորեն շրջանառվող մեկ այլ բնորոշմամբ՝ «արդեքեանական վազգետան» անդուրայի հոտ արձանվող բախոններից աշխարհի ձերբազատմանը: Այո, ոչ այլ կերպ: Չեցն այդպես:

Միակամի, հոկտեմբերի 10-ին Փարիզում ձախողվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի պաշտոնում Արդեքեանի ներկայացուցիչ, Ռուսաստանում այդ երկրի արտակարգ եւ փազոր դեսպան Փուլպի Բյուլբյուլյուլուի ընտրությունը: Լրահոսի տեղեկատվությամբ՝ քվեարկության առաջին փուլում միջազգային այդ կառույցի գործադիր կոմիտեի 58 անդամ-երկրներից միայն երկուսն էր իր քվե տվել արդեքեանց երգիչ-դիվանագետի թեկնածության օգտին: Ինչ խոսք, ո՞վքար էլ կռահել, թե ինչ երկրներ են դրանք: Որեւէ կասկած չի հարուցում, որ առաջինը հենց Արդեքեանն է, ով շատ եր ուզում միջազգային այդ բարձր հարթավան առաջին դեմքի կամ խմբավորի պաշտոնում կարգել յուրայինին: Թեկուզ Բաքվի համար Բյուլբյուլյուլուից էլ ոչ պակաս յուրային էր այդ կազմակերպության նախորդ՝ 11-րդ գլխավոր տնօրենը՝ Բուլդարիայի ներկայացուցիչ Բրիսն Բոկովան, ով այդ պաշտոնում 2009թ. ընտրվելուց ի վեր իրեն համարում է Արդեքեանի առաջին տիկին, իսկ ներկայումս նաեւ առաջին փոխնախագահ Մեիրիբան Ալիեայի մտերիմ ընկերուհին: Բայց ահա բուլդարացի մեր գրչակիցների լուսագրական հետաքննության արդյունքում պարզվել է, որ այդ մտերմությունից, բազիս բուն իմաստով, մագուրթի հոտ է փչում, ինչի արդյունքում տիկին Բոկովան հանկարծակի հարստացել է: Բուլդարական bivob-ը էլեկտրոնային կայքը ղեկեւտ անցյալ տարվա հունվարի 9-ին հոդված էր հրապարակել՝ տեղեկացնելով, որ նա Նյու-Յորքի Մանիթթեթեթ թաղամասում տիրապետում է ավելի քան երեք միլիոն դոլարի անշարժ գույքի: Այն անշարժ գույքը, որ երեք բնակարան է կազմում, ձեւակերպված է անձամբ Բոկովայի, իր ամուսնու եւ որդու անուններով: Նրա հաճախակի այցերը Բաքու եւ շրջալ որդկատաները Ալիեային ընտանիքի եւ, առանձնապես, Մեիրիբան Ալիեայի հասցեն, ավելի՛ն՝ ակնհայտ թուրքամետ մոտեցում ու տարածաշրջանի պատմամշակութային հուշարձաններին ու ոչ նյութական արժեքներին, անկասկած լավագույնս վկայում են, թե ինչ միջոցների հաշվին է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բուլդարացի դեկավորը ձեռք բերել այդ բնակարանները: Անում են նաեւ, որ այդ պաշտոնում իրեն փոխարինողի դերում նա տեսնում էր հենց Մեիրիբան Ալիեային, ում իր իսկ նախաձեռնությամբ է ժամանակին շնորհվել միջազգային այդ կառույցի Բարի կամքի դեսպանի կոչումը:

Անում են նաեւ, որ այդ պաշտոնում իրեն փոխարինողի դերում նա տեսնում էր Մեիրիբան Ալիեային, ում իր իսկ նախաձեռնությամբ է ժամանակին շնորհվել միջազգային այդ կառույցի Բարի կամքի դեսպանի կոչումը:

ձեռնություններ է ժամանակին շնորհվել միջազգային այդ կառույցի Բարի կամքի դեսպանի կոչումը:

Բայց երեւի թե այլ բան է օտարագրի յուրայինը, այլ բան՝ ազգակիցը: Մասնավոր, այնպիսի ազգակիցը, ում քանիցս փորձություն անցած հավատարմությունն այնեւյն վարչախմբին սահմաններ չի ճանաչում: Պատահական չէ, որ Բաքուն եւ Անկարան եռանդուն ջանքեր էին գործադրում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հերթական՝ 12-րդ գլխավոր տնօրենի պաշտոնում Բյուլբյուլյուլուի կարգելու ուղղությամբ եւ, որոշ տեղեկություններով, կարծես թե ահագին աշխատանք էին կատարել հարկ եղած թվով քվեների ապահովման համար: Համաձայն շրջանառվող տվյալների՝ այդ երանելի դիրքը գնելու նպատակով Բաքուն դույզն իսկ չի ափսոսացել ծախսելու ոչ պակաս, քան 10 մլն նավթադոլար:

Երկրորդ քվե, կարելի է ենթադրել, տվել է Թուրքիան, ինչը միանգամայն հասկանալի է մեզ համար, ինչը ընդունելով «Նմանը գնմանը կսիրե՛» հայկական իհի իմաստությունը, եւ կամ, որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, Ռուսաստանը: Վերջինս, ինչպես հայտնի է, նախապես քանիցս հայտարարել էր իր այդ կողմնորոշման մասին՝ երկրաբնի անխորի բոլոր, այդ թվում՝ Ռուսաստանի ժողովուրդների պատմամշակութային ու գիտակրթական արժեքների բացահայտման, անխաթար պահպանման եւ գալիք սերունդներին փոխանցման համար իր խորհուրդների ճակատագիրը հակված լինելով վստահել Մոսկվայում Արդեքեանի դեսպանին: Մի մարդու, ում անմիջական մասնակցությամբ անցած դարավերջին եւ նոր դարասկզբին Արդեքեանում վայրագորեն, բարբարոսական մուղուցով կամ ոչկացնել է կամ յուրացնել են բնիկ ազգային հավաքականությունների՝ հայերի, լեզգիների, ավարների, ցախուրների, թալիշների եւ այլոց պատմամշակութային արժեքները: Մի մարդու, ով, թուրքակի պես անդադար կրկնելով երկրի նախագահի հոխորտանքները, արդեքեանական հանրությանը շարունակաբար արյունահեղ պատերազմի է հրահրում մարդկային քաղաքակրթության իմմանայուններից մեկի՝ հայ ժողովուրդի եւ, առանձնապես, նրա արցախյան համովածի դեմ:

Այնուամենայնիվ, քվեարկության արդյունքում Արդեքեանի այդ վայ-մշակութաբան-դիվանագետը ձեռք բերեց այնքան քվե, ինչքանին իրականում արժանի է թե ինչը եւ թե իր երկիրը՝ ամբողջությամբ: Ըստ երեւույթի, միջազգային հանրությունը, ինչքան էլ մեզ արտաքուստ թվա, թե թմբիրի մեջ է, միեւնույն է, ամենեւին էլ լեթարգիական քնի մեջ չէ: Եվ ահավասի՛ր՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ախոռը մաքրվեց արդեքեանական արտեղանքից, Բյուլբյուլյուլուի ստիպված էր քվեարկության երկրորդ փուլում հանել իր թեկնածությունը՝ թոնթորալով, թե իրեն «քցել են», քանզի, իր իսկ խոսքով ասած՝ «Այն ասցուկությունը», որ նա խելսորական քարոզարշավի ընթացքում արտահայտում էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր կոմիտեի շատ անդամներ, հաջողության միջոց էր հանդիսանում: Եթե փորձենք ստուգաբանել այդ թոնթորանքի ենթատեքստը, ապա դժվար է կռահել, որ այդ նպատակով Բաքվի տված անառջեղեղ գործադիր կոմիտեի շատ անդամներ բառիս բուն իմաստով կերել-ուրացել են:

Հայկական առանձն ասում է. «Չկա չարիք առանց բարիքի»: Արդյոք բարիք՞ չէ, որ Բյուլբյուլյուլուի այդ ձախողմամբ աշխարհի ժողովուրդներն իրարից իրար կանգնել էին հոսալ, անդարձ ձերբազատվելին իրենց ազգային պատմամշակութային եւ ոչ նյութական արժեքների արդեքեանական հանգի հոռոտվելու, խեղաթյուրվելու հեռանկարից: Ու թե ո՞վ կընտրի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի պաշտոնում՝ քվեարկության հաջորդ փուլ անցած Բաթարի, Ֆրանսիայի, թե Եգիպտոսի ներկայացուցիչը, երեւի թե այնքան էլ Եսկան չէ՝ բարեբախտաբար այս անգամ առողջ բանականությամբ առաջնորդված միջազգային հանրության այդ ողջամիտ քայլի համեմատ:

Ավգյան ախոռներից արքահանման նույն այդ պատկերն էր հոկտեմբերի 10-ին տիրում նաեւ Եվրոպայի խորհրդի հորինդարանական վեհաժողովի (ԵսեհԿԿ) աշխատանքի նստաշրջանում, միջազգային հեղինակություն կառույց, որի գլխին դառնվյալն սրի պես կարխվել էր կոռուպցիայի արդում լուրին թաղելու վտանգը: Ի դեպ, անցած գրեթե յոթ տասնամյակում մեկ անգամ չէ, որ աղտոն այդ ուղվախնի պես պատվել է Եվրոպայի պալատի գլխավերելը, ինչի մասին այսօր էլ հստակ են ինչ-ու՛մ Վեհաժողովի հնարանակները: Բայց ահա այդ հոռի երեւույթի վերջին տարիներին աղմկահարույց բնույթագրիչները, որոնք հատու են դարձել միջազգային հանրությանը, ամենվրում են իմունակալում Արդեքեանի հետ:

Ինչպես հայտնի է, ինքը ընդունելով այդ ամենը, Ես խորհրդարանական վեհաժողովն այս տարվա իր զարնանային նստաշրջանի հերթական՝ ապրիլյան 25-ի լիագումար նիստում որոշում էր կայացրել հետաքննել Արդեքեանի նւն կապված կոռուպցիոն գործադրները: Բանն այն է, որ բացահայտվել էին Վեհաժողովի որոշ ներկայացուցիչների՝ Արդեքեանի կառավարությունից կաշառք վերցնելու իրողությունները:

Հիմնավորված մեղադրանքների թիրախ էր դարձել նաեւ Վե-

հաժողովի նախագահ, իսպանացի Պեդրո Ագրամոնտը, ով այդ պաշտոնում ընտրվել էր անցյալ տարվա հոկտեմբերի՝ առաջադրված լինելով իր իսկ գլխավորած Եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԿԿ) քվտայով: Հայտնի է, որ նա սատարում է Ուկրաինային եւ Արդեքեանին, հաճախակի հանդես է գալիս հակառուսական եւ հակահայկական հայտարարություններով, առաջինին՝ Ղրիմի, երկրորդին՝ Արցախի անկուսությունը:

Հիմնական մեղադրանքը, որ զարնանային նստաշրջանում հնչել է նրա հասցեն, կապված էր Ագրամոնտի՝ որպես ԵսեհԿԿ նախագահ Սիրիա կատարած այցի հետ, որ նա իրականացրել է առանց Վեհաժողովին եւ կամ նրա Բյուրոյին նախապես տեղյակ պահելու: Միեւնույն ժամանակ, նրա անուշը քանիցս հնչել է Արդեքեանի կողմից Վեհաժողովի անդամներին կաշառելու վերաբերյալ լուսագրողական հետաքննություններում: Մարդու իրավունքների պաշտպանները ընկադրված են Ագրամոնտի կապվածությունն Արդեքեանի կառավարության հետ՝ շեշտելով, որ նա բազմիցս այց է փակել այնտեղ մարդու իրավունքների ոտնահարման անժխտելի իրողությունների վրա:

Բայց հատուցումը երկար պաշտենցել չույց: Ինչպես ասում են՝ չաբաթն ավելի շուտ եղավ, քան ուրբաթը: Վեհաժողովի զարնանային նստաշրջանի բացման օրը՝ ապրիլի 24-ին, պատգամավորներն Ագրամոնտին հեռացրին դաշիճից՝ թույլ չտալով նախագահել նիստը: Նրան թույլատրել են ընդամենը մեկ ժամով նախագահել միայն ապրիլի 27-ի նիստը, երբ Վեհաժողովում ելույթով վերջ է հանելու գար Իսպանիայի թագավոր Ֆիլիպ 6-րդը: Անկայ այդ վերապահումը նույնպես չեղալ հայտարարվեց, եւ իսպանական թագավորը, ով Ստրասբուրգ էր ժամանել նրա իսկ՝ Ագրամոնտի հրավերով, ելույթ ունեցավ հրավիրող կողմի բացակայությամբ:

Պարզ էր, որ ԵսեհԿԿ նախագահի պաշտոնում Պեդրո Ագրամոնտի մնալ-չմնալ օրերի հարց է: Իր հրաժարականի մասին նա խոստացել էր հայտնել նստաշրջանի ավարտից երկու օր անց՝ ԵսեհԿԿ բյուրոյի Պրահայի նիստում, քաղաքական խմբերի հետ նախնական խորհրդակցություններ անցկացնելուց հետո: Սակայն նա խուսափեց մեկնել Պրահա՝ ներկայացնելու իր հրաժարականը: Վեհաժողովի բյուրոն իր նիստում ստիպված էր անվստահության քվե հայտնել նրան: Բացի այդ, Բյուրոն ընտնել էր որոշում, համաձայն որի՝ Ագրամոնտը լիազորված չէ կատարել որեւէ պաշտոնական այց, ներկա գտնվել ցանկացած խորհրդակցության եւ կամ Վեհաժողովի անուշից՝ որպես նրա նախագահ, հանդես գալ հրապարակային հայտարարությամբ: Եվ ահա վերջապես, ամուսնու անց, Վեհաժողովի աշխատանքի նստաշրջանի մեկնարկից չորս օր առաջ, կոնկրետ՝ հոկտեմբերի 6-ին, Պեդրո Ագրամոնտը, ենթարկվելով պատգամավորների գերակշիռ մեծամասնության պահանջին, ստիպված եղավ պաշտոնապես հրաժարական տալ զբաղեցրած պաշտոնից:

Ինչպես ասում են՝ տուրք տեղը դատարկ չի մնա: Եվ հոկտեմբերի 10-ին, քվեարկության երրորդ փուլի արդյունքներով, համալրվեց նաեւ Ես խորհրդարանական վեհաժողովի նախագահի թափուր պաշտոնը: Հավաքելով 132 քվե՝ այն զբաղեցրեց Կիպրոսի Հանրապետության պատվիրակության ղեկավար, պատգամավոր, Վեհաժողովում ԵԿԿ խմբի անդամ Անդելա Կիրիակիդեսը, ի դեպ, ում թեկնածությունը օգտին քվեարկել էր նաեւ Հայաստանի պատվիրակությունը: Նրանից շատ ավելի քիչ՝ 191-ից ընդամենը 84 պատգամավորական «կողմ» ստացավ քվեարկության երրորդ փուլում նույն կուսակցական խմբից նրա միակ մրցակից՝ լիտվացի Էմեանուեյիս Չիգիերսը, ում, դարձյալ՝ ի դեպ, Վեհաժողովի նախագահի պաշտոնում տեսնելու համար ջանք եւ եռանդ չէին խնայում արդեքեանական եւ թուրքական պատվիրակություններին ներկայացուցիչները:

Անշուշտ, կարելի է պատկերացնել Բաքվին ու Անկարային համակած խորը ափսոսանքն ու, մասնավոր, վրդովմունքը ողջամիտ բանականության Զերկուլեսի վարմունքից, որ ընդամենը մեկ օրվա ընթացքում՝ հոկտեմբերի 10-ին, համաժամանակ մաքրագատելով վիթխարի աղբակուտակի վերածվող ՅՈՒՆԵՍԿՕ-ն ու Ես խորհրդարանական վեհաժողովը, խստով արգելեց նրանց հետագա բոլոր արքանատումները: Միեւնույն ժամանակ, հուսանք, որ ներկա եւ գալիք սերունդները երբեւէ հայացք տածելով այդ երկու միջազգային կառույցներին, այլեւս առիթ չեն ունենա կրկնելու մարդկության մեծագույն հանձնարների փկլուրդ շրջալիցին: «Ամեն ինչ պղծված է եւ ավերված, այստեղով թուրքն է անցել»:

3.9.- 3-րդվածը պատրաստ էր տպագրության, երբ հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 13-ին՝ քվեարկության 5-րդ փուլի արդյունքներով, տասնամյա 30 «կողմ» ձայն, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի պաշտոնում ընտրվել է Ֆրանսիայի մշակութային նախկին նախարար, 45-ամյա Օդրե Ագուլեն: Ընտրվելով:

Աղբբեշանը կախկինում բանաստեղծներ ու գրողներ եր փորձում գողանալ, հիմա՝ երկրներ



Վերջերս Արցախ եր այցելել Չարապալյան Կովկասի պատմության ուսումնասիրող-հետազոտող, իրանցի Սալար Սեյֆուդինի: Ներկայացնում ենք «Ապառաժ»-ի բացառիկ հարցազրույցը իրանցի հետազոտողի հետ:

Պարոն Սեյֆուդինի, նախ՝ շնորհակալություն հարցազրույցի հրավերն ընդունելու համար: Կինոդերի ներկայացնել Արցախի Ձեր այցելության նպատակը:

Ընդհանրապես եմ հրավերի համար: Ես ուսումնասիրություններ եմ կատարում Կովկասի, Թուրքիայի եւ Իրանի ներքին խնդիրների վերաբերյալ: Ներկայումս Արցախում եմ, որպեսզի իմ համալսարանական աշխատության համար տեղում ուսումնասիրություններ կատարեմ: Յիմս իմ ուսումնասիրությունների նյութն է Իրանի դերակատարությունը Կովկասում, իսկ ավելի կոնկրետ՝ Արցախյան խնդրում:

Առաջին անգամ եք չճանաչված երկրում, եւ արդյո՞ք Ձեզ ապահով եք զգում Արցախում:

Ես տարբեր երկրներ եմ այցելել, եւ առաջին անգամ եմ Չայաստանում եւ Արցախում: Երեւանում եւ Ստեփանակերտում անկասկածաբար եմ զգում: Կարծում եմ, որ բացի նրանից, որ արտաքին վտանգ չի սպառնում, ներքին իմաստով էլ ապահովությունը շատ լավ մակարդակի վրա է:

Առաջին անգամ է, որ միջազգային մակարդակով չճանաչված երկրում եմ: Այլ երկրների հետ հարաբերություններում է ճշտվում որեւէ երկրի ճանաչված կամ չճանաչված լինելը: Բայց առօրյա կյանքում որեւէ բան չի զգացվում, որովհետեւ առկա է երկրի կառավարման համակարգ, պետական սահմաններ, որոնք էլ հսկվում են համապատասխան միջոցներով:

Արցախ այցելած օտարերկրյա թաղաքացիները հաճախ հայտնվում են Արցախի սեւ ցուցակում. մտավախություն չկա՞ր այդ առումով:

Աղբբեշանի սեւ ցուցակը գնալով ճոխանում է, ավելի շատ մարդիկ են ընդգրկվում, բայց ես կարեւորություն չեմ տալիս դրան: Այդ օրենքով Աղբբեշանը կարող է միայն իր թաղաքացիներին թելադրել՝ որեւէ երկիր գնալ կամ չգնալ, բայց ես Իրանի թաղաքացի եմ եւ, բնականաբար, Աղբբեշանի օրենքներն իմ դեպքում չեն գործում:

Արցախյան խնդրի առաջնայնամ Արանը միշտ հավասարակշիռ քաղաքականություն է վարում: Ինչպե՞ս է դա հաջողվում Իրանին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրանում ապրում են 20 միլիոն ավելի ազգիներ:

Սա թաղաքական ավանդույթ է, որը գալիս է դեռեւս Ղաջարների ժամանակներից: 1905-1907 թթ. Կովկասում թաղաքաների եւ հայերի միջեւ ընդհարումների ժամանակ, երբ բախումներ եղան Բաքվում, Նախիջեւանում եւ Երեւանում, թաթար ծայրահեղականները փորձում էին այդ խռովությունները հրահրել նաեւ Իրանում: Թաթարները ներկայացուցչներ ուղարկեցին Իրան՝ փորձելով Չամաղան, Սաբաղվար, Չանջան եւ Թավրիզ թաղաքներում եւս սադրանքներ հրահրել: Նույնիսկ Թավրիզ թաղաքում խմբեր էին հավաքագրել, որոնք արդեն պատրաստ էին հայկական թաղամասերում կոտորածներ իրագործել: Սակայն Թավրիզի հոգեւոր առաջնորդին՝ իմամին, հաջողվել է նրանց հանդուրժեցնել: Այն ժամանակ չափը Իրանում էր, եւ Եվրոպացի հեռագիր է ուղարկվում՝ հորդորելով ամեն կերպ թույլ տալ, որպեսզի այդ սադրանքը Իրանի սահմաններից ներս մտնի:

1917-18թթ. եւս Նմանորինյան դեպքեր հրահրվեցին: Իրանի իշխանությունները ամեն ինչ արեցին, որպեսզի հայերին վտանգ սպառնա: Աղբբեշանցիները պատմվորական են ուղարկում դեմոկրատական կուսակցության ղեկավար Շեյխմուհամադ Կիարանի մոտ, ովքեր առաջարկում են համատեղ ուժերով ճնշել հայերին: Շեյխմուհամադ Կիարանին մերժում է առաջարկը եւ շեշտում՝ եթե դուք իսկական մուսուլմաններ եք, երբեք չեք ցանկանա վրեժխնդիր լինել, մարդկանց սպանել:

Այս դեպքերը պատմեցի նրա համար, որպեսզի Ձեր ուշադրությունը հրավիրեմ Իրանում առկա այդ ավանդույթների վրա: Իրանը Արցախի հավամարտության երկու կողմերին

որպես իր եղբայրների է վերաբերում: Կովկասը պատկանում էր Իրանին, եւ Ռուսաստանը Իրանից խլել է այս տարածքը: Իրանը միշտ սրտագնաություն է ցուցաբերել եւ խաղաղության կողմակից է: Կարծում եմ, որ Ռուսաստանի թաղաքականության պատճառով է այս հակամարտությունը տեղի ունենում:

1988-94թթ. պատերազմի տարիներին Իրանը փորձեց հակամարտության նկատմամբ իր ավանդական մոտեցումը պահպանել: Առաջին ամիսներից Իրանը միջամտեց փոխդրժեման մթնոլորտ ստեղծելու համար: Լաշինի «գրավաճառ» օրերին Իրանը Թեհրանի իրավիճակը Չայաստանի եւ Աղբբեշանի նախագահներին խաղաղության համաձայնագիր ստորագրելու համար, որը հայտնի է որպես Թեհրանի խաղաղության համաձայնագիր: Իրանի բանակցություններն այդպես էլ արդյունքի չհասան: Իրանը հնարավորինս փորձել է անկողմնակա օգնություն ցուցաբերել հակամարտող երկու կողմերին էլ: Օրինակներից մեկն էլ այն է, որ Ղարաբաղից դեպի Իրան փախած ազգիները Իրանի տարածքում շուրջ 6-7 ամիս ստացան մարդասիրական օգնություն, որից հետո տեղափոխվեցին Աղբբեշան: Այս բարեգործությունների պատասխանը, իհարկե, ստացան Բաքվի կողմից երախտամոռությամբ, Իրանի դեմ թաղաքական քայլերի կիրառմամբ:

Իրանը եւ Արցախը բավականին մեծ ընդհանուր սահման ունեն: Ինչպե՞ս եք գնահատում ուղղակի տնտեսական եւ քաղաքական համագործակցության հնարավորությունը:

Իրանին հետ Արցախի սահմանը շատ կարելի է մեզ համար: Իրանի եւ Չայաստանի սահմանային գիծը 35 կմ է, իսկ Արցախի հետ՝ 135կմ: Զետագա համագործակցության հարցին թաղաքացիները պետք է պատասխանեն: Բայց այն մեծամասամբ կախված է հակամարտության հանգուցալուծումից եւ կարեն խաղաղությունից: Այժմ տարածաշրջանը ոչ պատերազմ, ոչ խաղաղություն իրավիճակում է, եւ Արցախի ճանաչումն այն հիմնական խնդիրն է, որի հետեւանքով որեւէ իրավական հիմք չկա հարաբերություններ հաստատելու համար: Այնպես է ստացվել, որ Արցախի հետ 135 կմ սահման ունենք, որը մի մեծ դարպաս է դեպի Կովկաս եւ չենք կարող այդ դարպասից օգտվել: Դեռ չգիտենք՝ խաղաղության այսամակագիր ստորագրելուց հետո սահմանամերձ տարածքների վիճակն ինչ է լինելու: Կարելի է, որ վերջնական խաղաղության պայմանագրի մեջ Իրանը եւ Ղարա-

բաղն ունենան ընդհանուր, թեկուզ փոքր սահման:

Դուք այցելել եք նաեւ իրանական մշակույթ ներկայացնող կառույցներ: Ի՞նչ տպավորություններ ստացաք տեսածից:

Իրանական հին գրքերում խոսվում է «Իրանկի» կոչվող սուրբ տարածքի մասին, որտեղ ոչ հիվանդություն կա, ոչ էլ որեւէ բացասական բան: Ուսումնասիրելով իսլամական 3-4-րդ դարերի պատմությունը, Սասանյան գրականության մեջ հանդիպել եմ, որ Ղարաբաղը հենց այդ Իրանկին է: Իրանկից սուրբ տարածք էր համարվում Չրադաշունի սուրբ գրքի՝ Ավեստայի, նաեւ պահպալեցին կրոնական տեքստերում: Որոշ իրանագետների կարծիքով՝ Իրանկից Ղարաբաղում է գտնվում: Իհարկե, Իրանկիի գտնվելու վայրի մասին այլ տեսակետներ եւս կան: Սակայն դա ցույց է տալիս, թե այս տարածաշրջանը որքան կարելի էր Իրանի եւ իրանական մշակույթի համար: Մենք այսօր այցելեցինք Անկարում գտնվող իրանական մզկիթը: Ես այնտեղ ցուցատախտակի վրա կարդացի, որ պետական պաշտպանության ներքո է գտնվում մզկիթը: Ընչու է, այն փակ է, բայց կառույցը կա, պահպանվել է նրա ճարտարապետությունը, միկարթները, սալիկապատումը: Կարծում եմ, եթե այդ տարածքը պատերազմական շրջան չլիներ, հեշտությամբ կարելի էր մզկիթը վերականգնել եւ թանգարանի վերածել, ինչպես արվում է Շուշիի մզկիթի դեպքում: Շուշիի մզկիթն էր նրա շրջապատում գտնվող գերեզմանաբերդի գրությունները պարունակեւ կամ արաբերեն են, որոնք շատ լավ են պահպանված: Սա վկայում է, որ իրանական մշակույթի այստեղ առկա է եւ պահպանվում է: Բնականաբար, իրանցիներն այս մոտեցումը համարում են հայերի բարի կամքի դրսեւորում: Հավանաբար, եթե այս տարածաշրջանը գտնվել Աղբբեշանի վերահսկողության տակ, այդ մզկիթները կներկայացներին որպես թուրանական մշակութային արժեքներ: Պարսկերեն արձանագրությունները կվերացնեին եւ ազերիական արձանագրությունները կտեղադրեին: Աղբբեշանը նախկինում բանաստեղծներ ու գրողներ էր գոյանում եւ փորձում սեփականացնել, հիմա էլ՝ երկրներն ու թագավորություններ: Նրանց պարսկական Սեֆյաների, Ավարների, Ղաջարների դինաստիաների մասին պատմություններ են հորինում, փորձում յուրացնել:

Պարագրույց՝ Տաթեյիկ ԱՐԱՋԱՆՅԱՆԻ

Չայրենիի հողի վրա բարիք արարելը մեր ժողովրդի սուրբ առաքելությունն է

Յոկոտեմբերի 8-ին մայրաքաղաք Ստեփանակերտի Վեճաճնդի հրապարակում անցկացվեց գյուղատնտեսության աշխատողի օրվան նվիրված բերքի հերթական՝ յոթերորդ տոնը:

«Անգնահատելի է այն ներդրումը, որ ունեն գյուղատնտեսության աշխատողները մեր պետականության ամրապնդման ու մեր երկրի տնտեսության հզորացման գործում: Բացառապես ձեր շնորհիվ է, որ արցախցիների սեղաններից անկապկաս են արեւահամ եւ Էկոլոգիապես մաքուր գյուղմթերքները:

Մեր ներկայացրած ոլորտն իր առջեւ դրված խնդիրը բավարար չգիտվ կատարում է, սակայն ժամանակը նոր մարտահրավերներ է առաջադրում, եւ մենք պետք է պատրաստ լինենք դիմադրակելու դրանք: Իսկ դրա համար պետք է լինել ավելի հետեւողական, նպատակարար եւ արտաքայլ: Ինչու պետք է, որ մեզանից յուրաքանչյուրն իր պարտականություններին վերաբերվի մեծազույն պատասխանատվությամբ՝ քաջ գիտակցելով, որ իր արածի կարեւորությունը համեմատելի է միայն խրախուսումն հայրենիքի անվտանգությունը պաշտպանող զինվորի գործի հետ: Չայրենիի հողի վրա բարիք արարելը դարձի ի վեր երբ ժողովրդի սուրբ առաքելությունն է եղել՝ նրա գոյատեւման հիմքը, այդու՝ շարունակվեք արժանապատվությամբ իրավասացվեք մեր շնորհակալ գործը:

Արցախի գյուղատնտեսական անհրաժեշտ է համակողմանի զարգացում, ինչը մեթադրում է էլ ավելի լուրջ ու մասնագիտական մոտեցում կարողանի թաղաքականությունը, միջոցների խնայողաբար ու խելամուտ տնօրինմանը եւ նորագույն տեխնոլոգիաների ու մոտեցումների կիրառության միջազգային փորձին», - նշել է ԱՀ գյուղատնտեսության նախարար Փիրայր Միրզոյանը՝ Գյուղատնտեսության աշխատողի օրվան նվիրված ուղերձում: Կազմակերպված միջոցառումն էլ նպատակ ունի օգնել ոլորտի աշխատողների արտադրանքի իրացմանը:



Մտավորական ժամը 9-ից մեկնարկած տոնավաճառին մասնակցեցին հանրապետության բոլոր շրջանները ներկայացնող 170 համայնքների ներկայացուցիչներ, հյուրերն էլ մասնակցիներ նաեւ Ղալաստանի Հանրապետությունից. ավելի քան 1000 մեքենա եւ նույնքան տաղավար: Կատարվել է շուրջ 900 մկ դրամի աւետուրներ:

Վեճաճնդի հրապարակը վերածվել էր Արցախյան բերք ու բարիքի, մթերքի ու խմիչքի տոնավաճառի: Արցախի գյուղատնտեսության նախարար Փիրայր Միրզոյանի ուղերձությամբ տոնավաճառն այցելեց եւ տաղավարների ծառայողական հանրապետության ղեկավարությունը՝ նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ:

Բերքի տոնը, նրանում ներկայացված բերք ու բարիքը, հողի աշխատավորին ու Արցախի աշխատին է օրհնել ՉԼԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգեյ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Արցախի մշակույթի, երիտասարդության հարցերի եւ գը-

սաշրջության նախարարության ու հանրապետության շրջվարչակազմերի մշակույթի բաժինների ուժերով էլ ներկայացվել էր մշակութային հարուստ ծրագիր:

Նմանատիպ տոնավաճառները գյուղատնտեսական ապրանք արտադրողներին, տնտեսվարողներին ու անհատ սեփականատերերին հնարավորություն են տալիս ներկայացնել իրենց արտադրանքը անմիջական գնորդին, իսկ գնորդներին՝ մատչելի գներով ձեռք բերելու անհրաժեշտ մթերքներ ու ապրանքներ: Տոնավաճառի այցելուների թիվն անցնում էր 30.000-ից:

Հավելենք, որ Արցախի գյուղատնտեսության նախարարությունը հոգացել էր միջոցառման մասնակիցների տրանսպորտային ծախսերը:

Մի շարք մրցանակներ են հանձնվել հետեւյալ անվանակարգերում.

Լավագույն շրջան՝ Բաշաթաղ, Լավագույն վերամշակող կազմակերպություն՝ «Մարտապերտի բարիքներ» ՄԲԸ,

Լավագույն նորարարություն՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարան:

Հանրապետության շրջաններից մրցանակների են արժանացել նաեւ հետեւյալ համայնքները.

Սակերանի շրջան՝ Զրադացներ համայնք, Զադուրյի շրջան՝ Խժաբող համայնք,

Մարտակերտի շրջան՝ Չափար համայնք, Մարտուռու շրջան՝ Խնուշինակ համայնք,

Շահումյանի շրջան՝ Նոր Վերին լեռ համայնք, Շուշիի շրջան՝ Բարին տակ համայնք,

Բաշաթաղի շրջան՝ Ալաշկերտ համայնք:

Տ.ԱՐԱՋԱՆՅԱՆ

Թեև դաշնակցական չեմ, սակայն կրում եմ Դաշնակցության գաղափարախոսությունը. Ստեֆան Փաուլոզ



«Իմ կրօնը միշտ կրում եմ Դայոց ցեղասպանությունը խորհրդանշող անմոռուկը: Շատերն են հարցնում, թե ինչ է նշանակում այդ մանուշակագույն ծաղիկը, ես էլ պատմում եմ 20-րդ դարում տեղի ունեցած մեծ ջարդի ու վայրագությունների մասին: Այս անմոռուկը պատմությունը ներկայացնելու և պատմելու միջոց է»,- «Ապառաժ»-ի հետ բացառիկ հարցազրույցի ժամանակ ասել է Մեծ Բրիտանիայի խորհրդարանի անդամ, Հայաստանի հետ բարեկամության խորհրդարանական խմբի նախագահ Ստեֆան Փաուլոզը: Տարիներ շարունակ հայության, ասորիների, իռանդացիների, լեռների ու ուկրաինացիների խնդիրներով հետաքրքրված պատգամավորի հետ զրուցեցին Անգլիա-Հայաստան համագործակցության, Անգլիայի հայ համայնքի, Դայոց ցեղասպանության ճանաչման և մի շարք այլ հարցերի շուրջ:

Երկու անգամ առիթ եք ունեցել լինելու Արցախում: Կուզեի իմանալ Ձեր տպավորությունը Արցախի մասին:

«Ես 2 անգամ եմ եղել Հայաստանում և Արցախում, ու կարող եմ ասել, որ դուք ունեց շատ «հայկական» երկիր: Ոչ ոք չի կարող այս փաստը ժխտել: Երբ ես եմ եկել, ուղիղ պատված ջարդերի՝ խաջարների, որոնք կային ամենուր, կրկին հասկանում ես, որ այս երկիրն անհավանական հայկական է: Հաջորդը, ինչը տիպիկ հայկական էր, եկեղեցիներն էին, իրենց բակերը և աստիճանները:

Ամենահետաքրքրական ինձ համար մի հոգեւորական էր, ով մի ձեռքով երեխային էր գրկել, իսկ մյուսին AK-74 հրաձիգ կար: Ես ինքս կաթոլիկ եմ, եւ ամուսնացած հոգեւորական տեսնելը տոկոսական է, սակայն երբեք չէի տեսել հրաձիգ բռնած հոգեւորականի:

Դուք ունեք հրաշալի բնություն, եւ եթե Արցախի օդա-նավայանքը բացվի, մարդիկ անպայմանորեն կգան Արցախ՝ ոչ թե ռազմական ուղղաթիռով, այլ ինքնաթիռով:

Դուք մեծ ներդրում ունեք Լոնդոնի Իլինգ քաղաքապետարանի կողմից Դայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Ինչպիսի՞ն է Անգլիայի քաղաքականությունն այդ խնդրի վերաբերյալ:

«Ես երբեք բանավեճ եմ ունեցել House of Commons-ում հայության եւ հայկական հարցի հետ կապված: Սակայն արդիական թեմաներից մեկը Դայոց ցեղասպանության ճանաչումն է:

Ցավովի էր, որ 2015-ի ապրիլի 24-ին՝ Ցեղասպանության 100-ամյակի ժամանակ պառլամենտի նստաշրջանը փակ էր կայանալից ընտրությունների պատճառով: Այսպիսով, պառլամենտում ոչինչ չարվեց: Սակայն մենք Իլինգ թաղամասում ապրիլի 24-ին ծիրանի ծառ տնկեցինք, որը հայերի ազգային խորհրդակիշ է: Սակայն ամեն եմ գգում, որ այդ ժամանակ ավելին անել չկարողացայ:

Դայոց ցեղասպանության թեման մեծ ալիք ստացավ նաեւ 100-ամյակից հետո «Կապույտ» գրքի վերահիշատարակումից հետո: Բանն այն է, որ ցեղասպանության ժամանակ քրիստոնացիները ֆրանսիացիների չափ օգնություն չեն ցուցաբերել հայերին, ինչպես ֆրանսիացիներն են արել: Սակայն քրիստոնացիները, մասնավորապես Լոյդ Բրայսը /Lloyd Bryce/ եւ Առնոլդ Թոյնբեյ /Arnold Toynbee/ հավաքել են ամբողջ փաստերը ցեղասպանության մասին, հիմնականում ամերիկացի միսիոներներ Օպենհայթից եւ Մորգենթաուից: Նրանք եղել էին հայկական փոխաբերում, մասնավորապես Վանի փոխաբերում ու արձանագրել էին այն ամենն, ինչ արել էին թուրքերը: Հայերի նկատմամբ ջարդերը տեղի են ունեցել ոչ միայն 1915-ի ապրիլին, այլեւ դրանից առաջ եւ հետո: Թուրքերի համար գլխացավանք է այն փաստը, որ անգամ մի քանի սերունդ հետո հայերը դառնում են լավագույն բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ եւ այլն:

«Բետաքրքիր է՝ ի՞նչ հարաբերություններ ունեք Անգլիայի ՀՀԴ Հայ Դատի հանձնախմբի հետ:

«Ես բավմիջոց եղել եմ Հայաստանում, հանդիպել եմ Դաշնակցության երիտասարդական միության հետ, հանդիպումներ եմ ունեցել նաեւ ՀՀ պատգամավորների հետ, ովքեր, ի դեպ, դաշնակցականներ չէին: Բոլորը գիտեն իմ կողմնորոշումը, որ թեեւ դաշնակցական չեմ, սակայն կրում եմ Դաշնակցության գաղափարախոսությունը: Իմ հայ ընկերների գերակշռ մասը դաշնակցական է, եւ ես ուրախ եմ, որ մեր «Հայ-քրիտանական ընկերակցություն» միությունը համագործակցում է Հայաստանի կառավարության հետ:

Խոսեցեք Անգլիա-Հայաստան համագործակցության մասին: Այս տարիների ընթացքում ի՞նչ ներդրումներ եւ օժանդակություն եւ ունեցել Բացառիկ Թագավորությունը, եւ համագործակցության ի՞նչ եզրեր կարող են լինել երկու պետությունների միջեւ:

«Եթե խոսեցեք Արցախի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ առկա հարաբերությունների մասին, պետք է ասեմ, որ սարսափելի են, որովհետեւ հարաբերություններ երկու պետությունների միջեւ գրեթե բացակայում է: Բայց եթե խոսեցեք Հայաստանի մասին, ապա տարբերությունն ակնհայտ է:

10 տարի առաջ Հայաստանում կար ընդամենը 1 քրիտանական կազմակերպություն, այսօր՝ 11:

Հայաստանի վիճակը մի քիչ այլ է: Այն ելք չունի դեպի ծով, ինչպես օրինակ հարեան երկիրը՝ Վրաստանը, եւ գտնվում է շրջափակման մեջ: Այսպիսով, Հայաստանի ապագան գիտելիքահեղք է: Հայաստանը ձգտում է խելքով/գիտելիքով զարգանալ: Աշխարհի լավագույն շախմատ խաղացողը հայ է՝ Լեոն Դրոնյանը:

Արցախի եւ Ադրբեջանի միջեւ 1994-ին կնքված զինադադարը հատկապես սկսվել է խախտվել վերջին տարիներին: Ինչի՞ հետեւանցով տեղի ունեցավ Ապրիլյան պատերազմը: Ի՞նչ կարող է անել Անգլիան որպեսզի ապրիլյան պատերազմը այլեւս չկրկնվի, եւ այդ հավանաբարությունը լուծվի խաղաղ բանաձայնի ճանապարհով:

«Ակնհայտ է, որ եթե Հայաստանը միանալ էր ԵՄ-ին, այսօր առավել լավ վիճակում կլիներ: Ես ձեզ չեմ մեղադրում, քայքայ Հայաստանի՝ Մաքսային միությանը անդամակցելուց հետո ՌԴ-ն ավելի մեծ ազդեցության հնարավորություն ունեցավ, քան արեւմուտքը:

Ազդեցություն մտածում էին, որ Ռուսաստանը կաջակցի իրենց Թուրքիայի պատճառով: Սակայն ես չեմ կարծում, որ դա այդպես է, որովհետեւ Ռուսաստանը եւ Թուրքիան աշխարհաքաղաքական առումով տարբեր ճանապարհներով են ընթանում: Իսրայիլն այն է, որ Հարավային Կովկասի կայունության բանալին Հայաստանում է, ոչ թե Վրաստանում, Հարավային Օսիայում կամ Զեխիայում: Այդ պատճառով Ռուսաստանը միշտ կաջակցի Հայաստանին:

Ի՞նչ կարծիք ունեք ՄԱԿ-ի վեհաժողովում Իլիամ Ալի-եյի ելույթի մասին, որում Ադրբեջանի նախագահը հակամարտության լուծման ռազմական տարբերակն է տեսնում միայն:

«Դուք պետք է հասկանաք, որ Ալիեյը հայատարաբություններ է անում որ իսկ անուկն: Ադրբեջանում իրականում չկա խոսքի ազատություն, մարդիկ հետապնդվում են, կան գաղտնի ծառայություններ, որոնք շատ վտանգավոր են:

Եթե դիտարկենք Ադրբեջանի կոռուպցիայի ճանապարհը, ապա այն ունի բավականին լուրջ ներքին խնդիրներ: Ի.Ալիեյը փորձում է աշխարհի ուշադրությունը կենտրոնացնել Դարաբադյան հակամարտության վրա: Սակայն երբ այցելում ենք Արցախ ու լինում «Մենք ենք մեր սարերը» կոթողի մոտ, տեսնում ենք, թե պատերազմից հետո ինչ բարեփոխումներ են տեղի ունեցել Արցախում: Արցախը անճանաչելիորեն փոխվել է ծաղկել է: Իսկ Ադրբեջանը պատերազմից 25 տարի անց անընդհատ պառկում է այդ լարվածությունը, եւ պատերազմական գոտիներում համարյա ոչինչ չի արել:

*Հարցազրույց վարեց
Լուսինե Թեոսյանը*

ՀՕՍ-ի Արցախի մասնաճյուղը յուրօրինակ բերքի տոն կազմակերպեց զինվորների համար

Արցախում մեծ շուքով նշվող՝ Գյուղատնտեսության աշխատողի օրվան կամ բերքի տոնին ընդամառ Հայ օգնության միության Արցախի մասնաճյուղը նախաձեռնել է հերթական այցելությունը Արցախի գործառնաբերից մեկը: Այս անգամ այցելության համար ընտրվել էր Մարտունու N գործառնաբերից մեկը: ՀՀԿ-ի Արցախի երիտասարդական միությունը ներկայացուցիչները:

«Եկել ենք Արցախի այգիների բերքն ու բարիքը, մեր ձեռքով պատրաստված քաղցրեղենը անձամբ հասցնելու մեր պաշտպաններին, նաեւ մեր մայրական սերն ու ջերությունը փոխանցելու նրանց, որովհետեւ մեր ամեն մի խաղաղ վայրկյանի համար պարտական ենք նրանց»,- զինվորների հետ հանդիպմանը նշել է ՀՕՍ-ի Արցախի գործառնաբերի տնօրեն Ավետիսյան Հարությունյանը:

ՀՕՍ-ի Արցախի միավորի «Այցելություն դիրքապահ զինվորին» ծրագրի իրականացման աշակերտել են ՀՕՍ-ի ԱՄՆ Արեւելյան շրջանի «Շաքե» մասնաճյուղը, Ֆրանսիայի Կապույտ հաջի «Բոնը Ջալանի» մասնաճյուղը, ԱՄՆ Արեւմտյան շրջանից Ատոդի Թասպագեանը, ԱՀ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցությունը: Նախաձեռնությանը կազմակերպական եւ տրանսպորտային հարցերում աջակցել է ԱՀ ԴՆ ռազմաօդային-ստորաբաժանի ռազմաօդային կազմակերպական կազմակերպությունների հետ կապերի բաժինը: ՀՕՍ-ուհիներին տրամադրվել է մեկ ավտոբուս եւ մեկ բեռնավտիարորդ մեքենա՝ գործառնաբերի շուրջ զինվորների համար նախատեսված մրգերն ու քաղցրավենիքը տեղ հասցնելու հա-



մար: Ծառարանի համար առանձնացված մթերքները բաշխելուց հետո այցելուները գործառնաբերի անձնակազմի ուղեկցությամբ անցան դիրքեր եւ իրենց սրտի խոսքն ու նախադասված արկերը փոխանցեցին զինվորներին:

«Ուրախ եմ, որ յուրօրինակ բերքի տոն կազմակերպեցինք զինվորների համար: Կարծում եմ, որ սա շարունակական պտեղ է լինի: Չինվորական ծառայությունը զինվորների կյանքի այն շրջանն է, երբ նրանք պիտի սկսվեն, եւ անհրաժեշտ է, որպեսզի զինվորների ամենօրյա ճաշացանկի մեջ մրգեր ընդգրկվեն»,- շեշտել է ԱՀ Ազգա-

յին ժողովի «Դաշնակցություն» խմբակցության եւ ՀՕՍ-ի Արցախյան միավորի անդամ Ռիտա Մնացականյանը:

«Նման այցելությունները ավելի են գոտեպնդում, ուժ տալիս զինվորներին, որովհետեւ նրանք գգում են, որ մենակ չեն, որ այստեղ ոչ միայն զինվորականների հավաքատեղի է, այլեւ ազգի»,- նշել է Չորամասի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, փոխգնդապետ Արա Զամախյանը:

Վերջերս գորակույցված Չազիկ Եկմայանը վստահեցրել է, որ ամեն զնով պահելու են հողը, ինչ էլ որ անի թշնամին: «Չինվորի համար այլ իրականություն է, երբ գիտակցում են, որ մենակ չեն, որ թու կողքին կանգնած է ամբողջ ազգը: Ինչպես Լճիկեն է ասում, երբ ազգն է բանակ դառնում, նրան հաղթելն անհնարին է: Մենք սին այդ ճանապարհի վրա ենք»:

Անցելով դիրք առ դիրք, ծանոթանալով զինվորների առօրյա պայմաններին, ՀՕՍ-ուհիները ակամատես եղան, թե ինչպիսի հոգաբարձարն ու պատասխանատվությամբ են զինվորները վերաբերում իրենց վստահված հոգաբարձարին, եւ վստահեցրին, որ թշնամուն դեմ-հանդիման կանգնած զինվորը միշտ գտնվում է հայ մայրերի, կանանց ու ջուրյների ուշադրության կենտրոնում:

Ավելացնելով, որ Հայ օգնության միությունը «Այցելություն դիրքապահ զինվորին» ծրագիրը պարբերական բնույթ է կրում, որին ՀՕՍ-ուհիներն առանձնակի սիրով ու ոգեւորությամբ են մասնակցում:

Տարբերակ Աղաջանյան

Հայ մնալն Անգլիայում գերիստիքի Է. Արմանդ Աբրամյան



Անգլիայի հայ համայնքի պատմության, հիմնախնդիրների ու ապագա տեսլականների մասին Լոնդոնի Հայ մարմնակրթական ընդհանուր միության հիմնադիր Արմանդ Աբրամյանը գրություն է «Ապառաժ»-ի թղթակցի հետ:

Հայերը Մեծ Բրիտանիայում

Մեծ Բրիտանիայում հայկական համայնքներ ստեղծվել են XIX դարի 30-ական թվականներին՝ Լոնդոնում, Մանչեստրում և Լիվերպոլում: Առաջին հայերն այստեղ հաստատվելու պատճառը եղել է Ռուսիայից, Իրանից և Կովկասից գաղթած բազմաթիվ հայեր: XX դարի 60-70-ական թվականներին հայերի հոսքը Մեծ Բրիտանիա ավելացավ հատկապես Կիպրոսից, Լիբանանից, Սիրիայից և Եգիպտոսից:

Անգլիայում ապրող հայերի թվի մասին հստակ վիճակագրություն չկա, սակայն Լոնդոնում ապրում է շուրջ 12 000 հայ, սակայն համայնքն ընդհանրության մեջ միասնական չէ: Այսօր կան զանազան հայկական կազմակերպություններ, որոնք համագործակցում են իրար հետ:

Թեև Բրիտանիայում գործում է համայնքային եւ եկե-

ղեցական խորհուրդ, որը կազմված է հայ ազգային կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների 17 ներկայացուցիչներից, սակայն այն չի հանդիսանում Անգլիայում ապրող հայերի ղեկավար մարմինը:

Նոր հոսք դեպի Անգլիա չկա, այդ պատճառով համայնքը գնալով փոքանում է: Իսկ Լոնդոնում ապրող հայերը տարիների ընթացքում ձուլվում են: Երիտասարդները իրար հետ անգլերեն են խոսում: Այսօր միայն տանը հայերեն խոսելը բավարար չէ լեզուն պահպանելու համար: Տան դռնից այն կողմ անգլերեն ու անգլիական միջավայրն է սկսում: Եթե Իրանում ապրող հայերը կարող էին պարսկերեն լավ չիմանալ, ապա Անգլիայի պարագայում չեն կարող առաջադիմել, եթե անգլերեն լեզվին լավ չտիրապետես: Դա է նաեւ պատճառը, որ հայերեն լեզվի օգտագործումը կորցրել է իր կարեւորությունը:

Լոնդոնում գործում է երկու շաբաթական դպրոց, որոնցից մեկը հիմնադրվել է 1984 թվականին՝ լոնդոնահայ բարերարների կույթական օժանդակությամբ: Դպրոցում սովորում է 3-17 տարեկան 150 աշակերտ: Իսկ Գեղորդ Թախթայանի անունը կրող կիրակնօրյա ազգային վարժարանի ծրագիրը ներառում է հայոց լեզու, պատմություն, մշակույթ առարկաները: Շաբաթվա մեկ օրը հայկական միջավայրում անցկացնելը շատ բան չի տալիս, բայց ոչնչից ավելի լավ է:

Այսօր հայ մնալն Անգլիայում գերիստիքի է: Հույս ունեւ, որ Նոր սերունդը կհամախմբի Լոնդոնում ապրող հայությունը:

Լոնդոնի Հայ մարմնակրթական ընդհանուր միություն /Յ.Մ.Ա.Մ./

Հայ ավանդական կուսակցություններից ներհամայնքային կյանքում ակտիվ դեր ունի ՀՀԴ-ն՝ իր կից կառույցներով, մասնակցությամբ՝ Հայ մարմնակրթական ընդհանուր միության, որի հիմնադրման ակունքները համընկել են Պարսկաստանում ապրող հայերի համալսարանական տարիների հետ:

1979 թվականին Իրանի «Արարատ» կազմակերպության սկաուտական միության մի խումբ՝ խմբապետներով Անգլիա եկանք ուսանելու: Զույս արդեն իսկ ապրում էր Լոնդոնում և նամակներում միշտ պատում էր Լոնդոնի «Հայ Տուն»-ի մասին: Լոնդոն ժամանելուց մեկ

ամիս անց այցելեցի այդտեղ և տեսա երեք սեղանների շուրջ նստած մարդկանց: Մի սեղանի շուրջ գրուցակիցները խսում էին թուրքերեն, 2-րդի շուրջ՝ անգլերեն, 3-րդի շուրջ՝ արեւմտահայերեն: Հասկացա, որ այդ տունն այնքան էլ հայկական չէ. անհրաժեշտ է հիմնել մի միություն, որը կհամախմբի Լոնդոնում ապրող հայությունը:

Միության անդամակի վայրը մեր ընկերներից մեկի տունն էր: Հանդիպում-ժողովների օրը՝ շաբաթ-կիրակին: Այդ ընթացքում ես միացել եմ Լոնդոնի ՀՀԴ Հայ Դատի հանձնախմբին, եւ Անգլիայով մեկ իրիկունները Հայոց ցեղասպանության մասին պատմող ֆիլմեր էինք ցուցադրում: Հերթական ֆիլմի ցուցադրության ժամանակ հանդիպեցի այլ իրանահայ երիտասարդների, որոնք հետագայում միացան մեր «տնային» ժողովներին:

Թեւ ժամանակ առ ժամանակ կազմակերպվում էինք հայկական պարահանդեսներ, սակայն ազգային կյանքը բացակայում էր Լոնդոնում: Ժողովների ընթացքում որոշեցինք սկաուտական աշխատանքներ սկսել: Հայ-տարաբույրների տարածեցինք, եւ առաջին նիստին ներկայացան 20-30 հոգի, որոնք սկաուտական անցյալ ունեին եւ հետաքրքրված էին նախաձեռնությամբ: Այդպես հիմնադրվեց Անգլիայի սկաուտական միությունը:

Քիչ ժամանակ անց բավականին հաջողություն ունեցանք: Այդ շրջանում Պարսկաստանի հեղափոխության պատճառով բավական մեծ թվով գաղթողներ են եկան Անգլիա: Աշխատանքները արագ թափ ստացան, ընտրություններ ունեցանք եւ ընտրեցինք գերագույն մարմին:

Դաշնակցության ուղեգծով եւ գաղափարախոսությամբ ծավալած աշխատանքների արդյունքում՝ երկու տարի անց միության անդամների թիվը հասավ 200-ի, մի քանի տարի անց՝ 400-ի:

1982-ին պաշտոնապես միացանք Հ.Մ.Ա.Մ.-ի կառույցին, որպես միության 50-րդ մասնաճյուղը: Հ.Մ.Ա.Մ.-ն Նոր շունչ տվեց եւ էլ ավելի ամրացրեց մեր միությունը:

Հ.Մ.Ա.Մ.-ն Անգլիայում գործող միակ կազմակերպությունն է, որը 38 տարի շարունակ կանոնավոր աշխատանքներ է տանում: Ցավոք, վերջին տարիներին անդամների թիվը պակասել է: Այսօր միությունն ունի 200 անդամ:

Լուսինե ԹԵԿՈՍՅԱՆ

Մեր ընտանիքի մասնագիտությունը հայ ազգին ու մշակույթին ծառայելն է. Նարեկ Հարությունյան



Նարեկ Հարությունյանի կողմից 2006 թվականին Շուշիում «Նարեկացի» արվեստի միության ստեղծվելու, կառուցվելու առաքելության մեջ կա նախախնամություն:

«Շուշիում նման կենտրոն ունենալն անհրաժեշտություն էր: Շուշին պետք է դառնա հայ ազգի մշակութային մայրաքաղաքը՝ վերականգնելով իր մշակութային հին անցյալը եւ Նորանոր ծրագրեր, կառույցներ, հինը պահպանելով՝ նորը կառուցելու ավանդույթը ունենալ», - ասել է Նարեկ Հարությունյանը:

Կրելով «Տիեզերական եկեղեցու վարդապետ» Գրիգոր Նարեկացու անունը եւ ունենալով «Զո կապը մշակույթի հետ» նշանաբանը՝ դարձավ արվեստների եւ արհեստների միության օջախ, որտեղ միախառնվել են երգն ու պարը, նկարչությունն ու գծագրությունը:

«Մենք միշտ ասում ենք, որ վերակառուցող ժողովուրդ ենք: Շուշին այսօր ունի վերակառուցվելու կարիք եւ կանչում է իր ժողովուրդին: «Նարեկացի» կենտրոնը իմ առաքելությունն էր: Հուսամ՝ միությունն իր եռլայնը օրինակ կծառայի նաեւ շատերի համար, որ իրենք էլ ծրագրեր մշակեն, որպեսզի մոտ ապագայում տունենա Շուշիի վերածնունդը», - նշել է Ն. Հարությունյանը:

«Ես երաժշտական, նկարչական կամ քանդակելու ձիրք չունեմ: Երիտասարդ տարիներին հետաքրքրություն ունեի թատերական ներկայացումների նկատմամբ: 90-ականներին համագործակցություն կար «Երանգունի» թատերական խմբի հետ: Հնկերներիցս մեկը՝ Միտր Գարագաշեանը կինոռեժիսոր էր, որն ինձ մտցրեց կինոյի աշխարհ, Աթուր Մեսչեանի հետ իրավասացրի առաջին պրոդյուսերական նախագիծը, որ կապված էր նրա «Կատարսիս» ստեղծագործության ձայնագրման հետ: Ինձ համար դա մեծ փորձառություն էր: Իսկ 2003թ-ից սկսեցի լուսանկարչությամբ զբաղվել, եւ մի քանի տարվա ընթացքում գտա իմ յուրահատուկ ոճը:

«Նարեկացի»-ն ստեղծված է ծառայելու հայ մշակույթին՝ արվեստի ու արվեստագետների միջոցով: Եվ քանի որ մենք հայ ենք եւ քրիստոնյա, մենք միշտ ունեցել ենք նաեւ մեր հոգեւոր ուղղվածությունը: Առաջնորդվում ենք վեհ, պարկեշտ հավատքով: Այդ է պատճառը, որ մի առիթով Տիգրան Մանսուրյանը «Նարեկացի»-ն անվանեց «հոգեւոր տուն»:

Կցականայի հատուկ նշել նաեւ, որ «Նարեկացի» արվեստի միության թե՛ Երեսնի եւ թե՛ Շուշիի մասնաճյուղերում ամեն ինչ անվճար է՝ լինի դա խմբակ, համերգ, հրատարակված հոդոք եւս խոսակցական եւ այլն: Սա սկզբունքային գիրք է մեզ համար», - նշել է Նարեկ Հարությունյանը:

Շուշիի «Նարեկացի» արվեստի միությունը Հարությունյանների՝ Աղջախում իրականացրած միակ ծրագիրն է: Նարեկի հոր ձեռամբ ազատագրված Զարկաճաղի շրջանում հիմնվել է Քնարական գյուղը՝ Նարեկի մոր՝ Քնարի հիշատակին:

Այս ամառ Շուշիում տեղի է ունեցել Նարեկ Հարությունյանի աղջնակի՝ Քնարի միությունը: Աղջկան Քնար կոչելը եւ Շուշիում միությունը կազմակերպելը պատահականությունն է: Ամեն ինչ իր խորհուրդն ու նպատակն ունի:

Երեւանում է Ամերիկայում ապրող, բայց սիրտն ու հոգին, միտքը Շուշիին պարզեա՞ծ Նարեկն ասում է, որ քրիստոնյա կնքվելն անհրաժեշտություն է: «Երբ աղջիկս



մեծանա, ես կպատմեմ նրան Շուշիի հերոսական պատմությունը, կպատմեմ նրա հետ Շուշիի բոլոր ներ ու լայն փողոցներով, կծանոթացնեմ նրան «Նարեկացի» կենտրոնում սովորող երեխաների հետ, կտանեմ նրան Քնարական գյուղ: Իմ Քնարը պետք է իմանա, որ այդ առաքելության մի մասն է կազմում: Նա այդ առաքելության շարունակությունն է: Նա պետք է գիտակցի, որ Շուշին իր պատմասիանապատմության մասն է կազմում», - ասել է Նարեկ Հարությունյանը եւ շեշտել, - մեր ընտանիքի մասնագիտությունը հայ ազգին ու մշակույթին ծառայելն է:

Մկրտության օրը խորհրդանշական էր նաեւ Նրանով, որ Քնարի մկրտության օրը Հայոց Մայրաքաղաքում հնչել է 1884 թվականին Մուսա լեռում պատրաստված թմրուկը՝ թմրուկի առաջին տիրոջ ծոռան՝ Սարգիս Չեյլյանի կատարմամբ:

«Թմրուկը հայ ազգի ժառանգությունն է: Մուսալեռից եկել, հասել է Հայաստան, դարձել «Մուսալեռ» հայրենակցական միության տոնախմբության կազմակերպման հիմնաքարը: Միայն Շուշիում չէր եղել, եկավ», - ընդգծել է Սարգիս Չեյլյանը:

Լ. ԹԵԿՈՍՅԱՆ

Հինգ անուն՝ Սպարտակ Սեյրանյանի ծայնադարանից

«Հետքը» իր «Հինգ անուն... ծայնադարանից», խորագրի ներքո ներկայացրել է «Հինգ անուն քաղաքական գործիչ» Սպարտակ Սեյրանյանի ծայնադարանից կյանքը, որը ձեր ուշադրության ենք ներկայացնում ամբողջությամբ:



Ազգագրագետ, ՀՀ-ի բյուրոյի անդամ, ՀՀ կրթության եւ գիտության նախկին նախարար (2008-2009թթ.) Սպարտակ Սեյրանյանին շատերն են ճանաչում՝ որպես երաժշտության, մասնավորապես ռոքի մեծ երկրպագուի: Իսկ ոմանք հասցրել են նաեւ համոզվել, որ նա ոչ միայն չափազանց հարուստ հավաքածու ունեցող երաժշտասեր է, այլեւ այս ասպարեզից լավագույնս տեղեկացված մարդ: Ս. Սեյրանյանը նաեւ նվագում է երաժշտական տարբեր գործիքների վրա: Չնայած հայտնի ռոքասեր լինելուն՝ նրա ծայնադարանն ընդգրկում է ամենահնարավոր ու անհնարին ժանրերը, որոնց երեւնի դժվար է միասին պատկերացնել եւ երաժշտասերի հավաքածուում. ռոք, ջազ, բլյուզ, հոգեւոր երաժշտություն՝ աշխարհի տարբեր կրոնաֆիլակա երգերով, պրոգրեսիվ, ֆոլկ, դասական... եւ այլն:

«Ճանաչալի առումով, այո, ծայրահեղ տարբեր է իմ նախընտրած երաժշտությունը, բայց տարածքը մեկն է՝ երաժշտություն,- մեկնաբանում է Ս. Սեյրանյանը,- որովհետեւ երաժշտությունն ինձ համար առանձին կղզյակներ չունի» ռոք, ֆոլկ, ջազ կամ դասական կղզյակ: Այն մի մեծ օվկիանոս է, որի ալիքները կարող են տարբեր ձեւ ու ուժգնություն ունենալ: Հետեւաբար, ինձ համար գոյություն ունի երաժշտություն՝ իր տարբեր դրսեւորումներով եւ գույներով»:

Եվ չնայած այս բազմաժանր եւ միմյանցից տարբեր երաժշտագույների՝ ռոքն, այնուամենայնիվ, մշտապես իր հաստատուն տեղն ունի այս երաժշտասերի կյանքում:

«Երաժշտությունը ժամանց չէ, հորբի կամ լավ հավաքածու ունենալը չէ, եւ, նույնիսկ, պարզապես արվեստի ճյուղ է,- ասում է նա,- երաժշտությունը մտածողություն է եւ կեցության ձեւ: Այն այս տեսակետից լինելով՝ ռոքը կենսափիլիսոփայություն է ինձ համար, այլ կերպ ասած՝ ապրելակերպ: Ռոք երաժշտությունը կյանքի ռիթմ է, նաեւ՝ բնավորություն. թեթ, իհարկե, դու ոչ թե միայն ունենիր ես, այլ դա քո էության մի մասն է: Եվ թե դու իրապես այդ երաժշտությունն ընդունում ու հասկանում ես, ինքը բեզ անպայման փոխում է»:

Պատմում է, որ առաջին անգամ ռոք լսել է 10 տարեկանում, եւ այդ հանդիպումն ոչ միայն անապատելի էր, այլեւ՝ ոչ այնքան խոստումնալից:

«Ծննդյանս օրվա առիթով ընկերներս նվիրել էին «Deep Purple խմբի «Fireball» ալբոմը:

Ես այն ժամանակ երաժշտական դպրոցում էի սովորում»,- հիշում է Ս. Սեյրանյանը: Հավանաբար Սենդեյտոնի ռոմանտիկ



հնչյուններն ու դրանցով լեցուն մանրանվագները մտնում էլ նա միացրել էր ծայնադարանին ու անակնկալի եկել՝ այնտեղից դուրս թափվող աղմուկից:

«Առաջին մի քանի նոտաները լսելուց հետո զարմանքից կարկամել էի... ինձ համար դա ոչ թե պարզապես ինչ-որ աղմուկ էր, այլ՝ շոկի պես մի բան,- պատմում է Ս. Սեյրանյանը,- նույնիսկ մտածեցի՝ ես ի՞նչ հիմարություն եմ, երեւի կատակի համար են նվիրել»:

Որոշ ժամանակ հետո նորից սկսեցի լսել: Ու գրավեց, տարավ... հետո դարձավ կանգնիս քաղցածուից մասը՝ հարդ ռոքը, «Deep Purple»-ը»:

Հետո, արդեն գտած երաժշտության ազդեցությամբ, սկսել է կիթառ եւ հարվածային գործիքներ նվագել սովորել»:

Արդեն մի քանի տարի է, ինչ ռոքից բացի Ս. Սեյրանյանը շատ հետաքրքրված է հոգեւոր երաժշտությամբ: Ոչ թե միայն հայկական շարականներ, այլեւ աշխարհի տարբեր ժողովուրդների հոգեւոր երգեր, կրոնաֆիլակա երաժշտություն: Եվ այս առումով էլ ունի մեծ հավաքածու:

Այսու է, որ շատ ու շատ «իզմերով» հետաքրքրվելուց հետո (արվեստի ցանկացած բնագավառում), մարդը, միեւնոյն է, վերադառնում է դեպի ակունքներ: «Ոչ թե դեպի սեփական, այլ՝ մարդ մնալու ակունքներ»: Բայց երբ հարցը վերաբերում է բազմաժանր ծայնադարանից հինգ անուն ընտրելուն, ապա ռոքն իր ծանրակշիռ տեղը նորից առաջ է մղում:

«Ես այսօր առանձնացրել եմ 5 անուն, որոնք, իմ կարծիքով, բեկումնային են եղել երաժշտական այս ուղղության մեջ»:- ասում է Ս. Սեյրանյանը:

Այսպիսին են նրանք՝

«Deep Purple» խմբի 1970թ. թողարկված «In Rock» ալբոմը

«Ես այս ալբոմն առաջին անգամ լսել եմ 1973թ.: Սա իմ կարծիքով ռոք երաժշտության մեջ բոլորովին նոր խոսք ու ոգի ներարկեց, ընդլայնեց նաեւ նրա դրսեւորման սահմանները,- այսպես է մեկնաբանում Ս. Սեյրանյանը,- Այս ալբոմով նրանք կարծես ասացին, որ ռոք երաժիշտը միայն ձեր ճանաչած երկար մագերով, ինչ-որ տեղ՝ անհնազանդ վարքով կամ հիպիի կյանք վարող երիտասարդ չէ: Իր ռոքի տարածքում ստեղծագործողը նաեւ տալիս էր հասարակության մեջ ապրող եւ այնտեղ առկա խնդիրները կիտրո, ավելին՝ դրանց մասին բարձրաձայնող երիտա-

սարդն է»:

Այս ալբոմում նրա համար ամենասիրելին եւ առանձնահատուկը անպայման «Child in Time»-ն է:

Խմբի պատմությունն այս երաժշտասերի համար իր մեջ ներառում է առանձնահատուկ վերաբերմունք, հատկապես՝ լեգենդար Ջոն Լորդի հանդեպ: Սպարտակ Սեյրանյանը նրա ստեղծագործական ուղուն հետեւել է այն կարելու է նաեւ Լորդի՝ խմբից հեռանալուց, անհատական գործունեություն ծավալելու ընթացքում:

«Ուզում եմ հավելել, որ Ջոն Լորդի շնորհիվ երկխոսության եզրեր գտնվեցին երկու հակադիր տարածքներ ընկալող երաժշտական ուղղությունների միջեւ՝ դասական-ակադեմիականի եւ ռոքի: Նա ասում էր, որ պետք չէ իրար հակադրել ռոքն ու դասականը, եւ որ կա ոչ միայն շփման, այլեւ՝ երկխոսության եզր: Նա բերեց այս երկու աշխարհներն ու համադրեց իրար ներդաշնակորեն: Ոչ թե հավասարեցրեց, այլ երկխոսության վերածեց եւ ասաց, որ կարելու էր գեղեցկությունն է, ներդաշնակությունը եւ հոգու հետ խոսելու կարողությունը,- դիֆիքլիթյան առաջնորդող շարքն այսպես է եզրափակում Ս. Սեյրանյանը:

«Led Zeppelin» խմբի 4-րդ ստուդիական ալբոմը՝ անսուն, բայց հաջորդականության տրամաբանությամբ՝ որպես «Led Zeppelin IV» հիշատակվող

Այս ալբոմը թողարկվել է 1971թ.: Այն լեգենդար Ջիմի Փեյջի մտահղացումն էր՝ ոգեւորված «Led Zeppelin III»-ի հաջորդություններից: Թե ինչու է նրան վերապահված երկրորդ լինել մեր այսօրվա ծայնադարանում, Ս. Սեյրանյանն այսպես է մեկնաբանում. ««Led Zeppelin»-ն այս ալբոմով ապացուցեց, որ բլյուզը՝ ավելի կտրուկ հնչողությամբ եւ այլ լարերի մեջ, կարող է ցնցող ռոք դառնալ»:

Այստեղ եւս կա մի գործ, որն անհնար է չփոթել որեւէ այլ երգի, երաժշտության կամ խմբի ոճային խառնվածքի հետ: Եվ ինչպես նախորդում՝ «Child in Time»-ում, այս մեկում եւս, ընդամենը առաջին մի քանի հնչյուններից հետո կարելի է հասկանալ, թե խոսքն ինչի մասին էր: Այսպիսին է այցեքարտային, ժամանակ ու տարածություն չճանաչող «Stairway to Heaven»-ը:

«Pink Floyd»՝ «The Dark Side of the Moon»

«Ռեյտրոկ Ակումբ» երաժշտական շարքում մի ամբողջ պատմություն ենք նվիրել այս ալբոմին՝ «Երաժշտության ու պատկերի լավագույն երկխոսություններից մեկն աշխարհում» խորագրով: Զայնասկավառնեք թողարկվեց 1973թ. մարտ ամսին. խմբի 8-րդ ստուդիական ալբոմն է եւ համաշխարհային փառքի խորհրդանիշը: Երաժշտական քննադատների մեծ մասը վստահեցնում է, որ սա «Pink Floyd»-ի լավագույն ձայնասկավառակն է՝ բոլոր առումներով: Մինչ օրս այն մնում է աշխարհում ամենավաճառված ալբոմների ցուցակում, իսկ սկավառակի կազմը լավագույններից մեկն է: Եթե ոչ՝ լավագույնը:

«Փոխվել է մի քանի սերունդ, ու ոչ միայն երաժշտասերների, այլեւ՝ ռոքի,- ասում է Ս. Սեյրանյանը,- Եվ, այնուամենայնիվ, այս ալբոմը մնում է ամենաճանաչվածներից մեկը մինչեւ այսօր: «The Dark Side of the Moon»-ը ռոքի դասական ալբոմ է»:

Լուսինի հակառակ կողմից աշխարհին լսվող նրա ամենասիրելի ձայնն էլ «Time»-ն է՝ ժամանակի անզոր զգացողությունը ժամացույցի ճայտով արթնացնող, մարդկային սրտի քայքայումով այդ ժամանակվա փոխումը կանխելու փորձ անող փիլի-


սոփայությամբ:

««Փիքս Ֆլոյդը» պրոգրեսիվ երաժշտության մեջ ներմուծեց այնպիսի էլեմենտներ, որոնք մինչեւ հիմա ոչ մեկին չի հաջողվել կրկնօրինակել»,- ասում է Սպարտակ Սեյրանյանը:

«Yes»՝ «Going for the One» (1977թ.)

Թեեւ մինչ այս ալբոմը նախընտրած շատ երգեր կան նաեւ նախորդ հավաքածուներից, այնուամենայնիվ, «Yes» պրոգրեսիվ ռոք խմբի գործունեության մեջ այս մեկն առանձնահատուկ է Ս. Սեյրանյանի համար:

«Նրանց բարդ երաժշտությունն են նվագում՝ հիմնականում բարդ հարմոնիաներով եւ դասական երաժշտության կանոններով: Բացի այդ՝ այստեղ չկան երգի կառուցվածքային ընդունված բանաձևերը՝ տուն-կրկներգ-երկրորդ տուն... Եւ այլն՝ համապատասխան երաժշտությամբ: Նրանց երգերը կարող են սկսվել մի ռիթմով եւ ավարտվել բոլորովին այլ զարգացմամբ: Խմբի 70-ական թթ. համերգները նայելիս ապշել կարելի է, երբ հասկանում ես, որ այդ երաժշտությունն իր ընկալման բարդությամբ, անսովոր լուծումներով կարողացել է հսկայական մարզադաշտերը փոքր ու ներդաշնակ դարձնել իր հազարավոր երաժշտասերների համար»:



Բրիտանացի երաժիշտ Սթիվեն Ուիլսոնը Սպարտակ Սեյրանյանի ծայնադարանում 5-րդ տեղում է՝ «Grace for Drowning» (2011թ.) ալբոմով

«Բարեբախտաբար, այս երաժշտին բավականին շատ են լսում նաեւ Երեւանում,- նկատում է Ս. Սեյրանյանը,- Նա իր երաժշտությամբ քննել է բոլոր սահմանները ակադեմիական եւ ռոք երաժշտության միջեւ՝ առաջարկելով բոլորովին այլ մոտեցումներ երաժշտության ընկալման մեջ: Հնչյունի, ձայնի փորձագիտի հետ իր ստեղծագործական աշխատանքով, իմ կարծիքով, նա նոր հիմք է դնում երաժշտական բոլորովին նոր մտածելակերպի, որը, համոզված եմ, լեյտմոտիվ պիտի դառնա առաջիկայում»:


Այս ալբոմում նա առանձնացնում է «Rider II» գործը:

«Երաժշտությունը ամենադժնոկատ արվեստն է,- համոզված է Սպարտակ Սեյրանյանը,- Բոլոր նրանք, ովքեր փորձում են երաժշտության անդրադարձնալ միայն լսողական օրգանով, իմ կարծիքով, դասապարտված են այն ճիշտ ընկալելու անկարողությամբ: Որովհետեւ երաժշտությունը հոգուց հետ է խոսում, ոչ թե ականջից»:

Hetq.am

«Ապառաժ»-ը 100 տարի առաջ էլ այսօր

Մամուլ



Օրերումս /յուլի 25-ին/ լրացավ Հայ ազատամարտի մի պատմական խոշոր եղելության 20 ամեակը, որ մեր վերջին պատմության մեջ այնքան արժեքավոր տեղ ունի: Դա հասնասորի արշավանքի 20-ամեակն է. որի առթիվ թափվեց «Այգ»-ը իր խմբագրականում գրում է:

Հայկական տառապանքի այս պատմական օրերին զուգահեյլում է Հ.Յ.Դ. վարած հերոսական ազատամարտի դրագներից մեկի. հասնասորի արշավանքի-քսանամեակը:

Մի յետադարձ հայեացք՝ ձգելով դեպի այդ արիւնտ օրերը՝ թույլ է, թե՛ հայ անքն ու դժբախտ ճակատագիրը որեւէ փոփոխության ենթարկելու համար քսանամեակները քիչ են ու անգոր:

Աղբյուրաց յոթնամյա, երուսական դիպլոմատիայի տմարդի քաղաքականությունից յուսահատ եւ տաճկական հայաքիչ քաղաքականությունից արիւնքամ մի վեր-

ջին միջոց էր մնում հայ ժողովրդի կենսունակ տարրերի, հայ տոկոսն ղեմկրատիայի համար, այն է՝ կռիվ դիմել եւ կռուվ պաշտպանել իր մարդկային իրաւունքը...

Եւ հավաքում են հայ մտքի, հայ կեանքի ամենակենսունակ տարրերը ազատության ու վրեժի համար պարզած դրոշակի շուրջը՝ մղելու այն փառաւոր գոյամարտը, որը մեր պատմության ամենապանծալի էջերն է զարդարում:

Այդ էջերից մի հատած է հասնասորի արշավանքը՝ ուղղված այդ դաշտում բուն դրած քրդական մի ցեղի դեմ, որի թաթերի վրայից դեռ չէին անտեսացել հայկական արեան ճապաղիքը:

Անծանոթ դիտողի համար մի րոպէ՛ գարմանակի պիտի թայ, թե՛ ինչպէս մի ստրուկ ժողովուրդ իր ազատական պայքարի հարամներն ուղղում է դեպի իր հարեան ստրուկը եւ ոչ թե՛ նրա հետ միասին պայքարում ընդհանուր թշնամու դեմ:

Այդպէս կթայ անծանօթին միայն, բայց նրանք, ովքեր մոտիկից ծանօթ են մեր շուրջապատում ստրուկ ազգերի յարաբերություններին, նրանք լաւ կիմանան մեր ճակատագրի ողջ դառնությունը:

Քրդութիւն միւնէլ այսօր էլ դեռ շարունակում է մնալ իր տիրողների հլու կամակատարը եւ ամեն կարգի հայաքիչ քաղաքականության ամենահատուկ յետամնացութեան ու բարբարոսական կենցաղի:

Նախորդ եւ հետագայ փորձերը ցոյց տւին, որ այդ կոյր մասսան միայն ոյժը հաշվի առնել գիտ հարեանի մեջ, եւ ահա այդ տխուր իրողութեան առաջ է խոնարհում հայ յեղափոխական մարտական ոգին՝ իր մեջ առած կուսակցութիւնը, կռիւ դուրս գալով ամեն ուղղութեամբ, որտեղից վտանգ էր հասնում հայ ժողովրդի կենսելին ու գոյութեան:

Հասնասորի կռիւն մէկն է այդ հարկադրւած պայքարի եւ թերեւս ամենամեծն ու խրատականը:

Սոսիալիստական
Հինգշաբթի, 10 օգոստոսի
N16

Բարոյական Յաղթանակ

Համարեա մի ամսեայ ուժեղ Նախընտրական պայքարից յետոյ, կիրակի, յուլիսի 30-ին տեղի ունեցավ քաղաքային իրաւաստների ընտրութիւնը: Ներկայացրել էին հինգ ցուցակներ, որոնցից անցել

են:

N1 սոց. դեմոկրատների եւ սոց. յեղափոխականների բոլոր 49 թիկնածուներից 10 հոգի, N2 ժողովրդ. ազատութեան եւ նոյն հայկական կուսակցութեան բոլոր 24-ից՝ 1 հոգի, N3 արտակուսակցական սոցիալիստների 24-ից՝ 1 հոգի, N4 Հ.Յ. Դաշնակցութեան 52-ից՝ 36 հոգի եւ N5 բոլշեւիկների 15-ից՝ 12 հոգի:

Ընտրութեան հետեւանքի ներկայ պատկերը պարզօրէն ցոյց է տալիս Հ.Յ. Դաշնակցութեան ընդ ոյժը. մի անգամ եւս ապացուցում է, որ հայ աշխատաւորութիւնը Հ.Յ. Դ. կողմն է:

Նախընտրական պայքարի ժամանակ մեր դեմ կռուող մեր թշնամիների բոլոր աններելի, ստոր ու փողոցային միջոցները կատարեալ այնպէս օգտագործուեցին... Թող մեր հակառակորդները՝ սոց. դեմոկրատ մենեշիկներն ու բոլշեւիկներն իմանան, որ իրենց 10 եւ 12 թիկնածուները «վաստակել» են ռուս գիւնդութեան մեջ...

Իսկ ժողովրդական ազատութեան կուսակցութեան եւ արտակուսակցական «սոցիալիստների» շահած մի-մի թիկնածուները ապտակ է նրանց համար:

Այսօր թող բոլորը տեսնեն, որ հայ աշխատաւորութիւնը ճանաչում է իւր բարեկամներին եւ նրա ամբողջ համակրանքը Հ.Յ. Դաշնակցութեան կողմն է...

Աղբյուրաց
Սոսիալիստական
Հինգշաբթի, 10 օգոստոսի
N16

«Տխուր է՝ ընկերներ չունենալ, սակայն ավելի տխուր է՝ թշնամիներ չունենալ» Էռնեստո Զե Գեարա

Մահկան 50-ամյակի կապակցությամբ



Մեր ժամանակակիցներից քչերն են կարողացել այնպէս պայթեցնել հասարակական գիտակցությունն ու իրենցից հետո նույնքան գաղտնիքներ ու հանելուկներ թողնել, որքան 20-րդ դարի խորհրդանշիչ Զե Գեարան: Էռնեստո Զե Գեարան ծնվել է 1928 թվականի հունիսի 14-ին իռլանդական ծագումով ճարտարապետ Էռնեստո Գեարան Լինչի ընտանիքում:

Նրա երակներով հոսում էր արքայական արյուն, որը նա ժառանգել էր մորից, ում Նախնիներից մէկն իսպանական գեներալ էր, իսկ մյուսը՝ Դերուի փոխարքա:

Ընտանեկան պայնտագիւյում Էռնեստո Գեարա Լինչն առաջինն էր, որ իր աշխատողներին սկսեց աշխատավարձը փողով վճարել, ինչով արժանացավ տե-

ղացի պլանտատների ղոգոհությանը: Իր հինգ երեխաներին Լինչը դաստիարակում էր բազմակողմանի. տանը մի քանի հազար գիրք ունեցող հսկայական գրադարան կար, իսկ տան դռները միշտ բաց էին ամենատարբեր խավերի երեխաների համար:

Իսպանիայում քաղաքացիական պատերազմի ժամանակ Գեարայի տանը շատ են լինում զինվորականներ, քաղաքական ակտիվիստներ, ովքեր շատ են պատմում ու քննարկում աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները: Ամենայն հավանականությամբ այդ ժամանակ էլ Էռնեստոյի մոտ ծնւալորվում են աշխարհի բարդ ու անարդար կառուցվածքի մասին հայացքները:

1945 թվականին, ավարտելով միջնակարգ դպրոցը, նա ընդունվում է Բուենոս-Այրեսի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Ուսանելիս նա տարվում է ժան Դոլ Սարտրի, Գարսիա Լորկայի եւ Պաբլո Նեռուդայի ստեղծագործություններով: Սկսում է օրագիր վարել եւ բանաստեղծություններ գրել, որոնք նրա մահից հետո հրատարակվում են բազմափառ օրինակներով:

Արդեն այդ տարիքում են որոշել էր, որ իր գլխավոր առաքելությունը ոչ թե անձնական կյանքն էր լինելու, այլ մարդկանց ծառայելը: Նրա համար վառ օրինակ էին ծառայում գործին կնիղյալ հեղափոխականները: 1952 թվականին նա այցելում է Չիլի, Դերու, Վենեսուելա եւ Կոլումբիա: 1953 թվականին Գեարան վիրաբույժի եւ մաշկաբանի դիպլոմ է ստանում: Բանակ գնալու փոխարեն նա գնում է Բոլիվիա, որտեղ այդ ժամանակ գլուխ էր եղել Էռնեստոյի եւ տեղի ունեւում: Նա անմասն չի մնում դրանցից:

Մեքսիկայում Գեարան հանդիպում է Ֆիդել եւ Ռաուլ Կաստրոյի եւս: Այս ծանոթությունը Էռնեստոյին հե-

տազայում բերում է ազատության կղզի Կուբա: Հետագայում նա, որ հանդիպումից հետո Ֆիդելը նկատել էր Զե Գեարայի հեղափոխական հասունությունն ու գաղափարների համարձակությունը:

Արժե՛ ասել, թե ինչպիսի քաջություն պետք է ունենալին այն 82 մարդիկ, ովքեր 10 հոգու համար Նախատեսված Նավով ուղեւորվեցին բաց ծով: Նրանց օրինակը Կուբան էր, նպատակը՝ ազատություն: Զե Գեարայի շրջապատի մարդիկ ընդգծում են ընթերցանության հանդեպ նրա անսահման սերը, երկաթյա կամքը, իրեն պատկերին հավատարմությունն ու ընկերների նկատմամբ անձնագոհությունը:

Շուտով Զեն դառնում է Կուբայի հեղափոխական կառավարության Նախարարը, ժամանակակից հեղափոխականի համաշխարհային խորհրդանշիչը: Նա մասնակցում է աֆրիկյան երկրների եւ Բոլիվիայի հեղափոխական շարժումներին: 1967 թվականին հոկտեմբերի 9-ին Զեն գերի է վերցվում եւ գնդակահարվում: Այն տուր, որտեղ սպանում են Գեարային, հավասարեցնում են Գեռնին, իսկ նրա գերեզմանի վայրը պահում գաղտնիության մեջ:

Միայն 1997 թվականի հունիսին արգենտինացի եւ կուբացի գիտնականներին հաջողվում է գտնել լեգենդար հեղափոխականի մասունքները: Դրանք տեղափոխվում են Կուբա: Լատինական Ամերիկայի եւ Կուբայի շատ բնակիչների համար Զե Գեարան սուրբ է, նրան դիմում են «San Ernesto de La Higuera»՝ խնդրելով պաշտպանություն եւ գթասրտություն: Զե Գեարայի կերպարը մեր ժամանակակից պատմության մեջ ավելին է, քան պարզապէս հեղափոխական կերպար:

Liberal.am

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կոնկանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արժանաւոր տեսակետներ չի կրում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՆ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

համբազիր
Ա. Դուռնյան